HAL
open science

-

Arestakes Simavoryan, Vahram Hovyan

To cite this version:

Arestakes Simavoryan, Vahram Hovyan. - . Gagik Harutyunyan. 2018, 978-9939-825-39-7. halshs-03280036

HAL Id: halshs-03280036

https://shs.hal.science/halshs-03280036

Submitted on 7 Jul 2021

HAL is a multi-disciplinary open access archive for the deposit and dissemination of scientific research documents, whether they are published or not. The documents may come from teaching and research institutions in France or abroad, or from public or private research centers.

L'archive ouverte pluridisciplinaire **HAL**, est destinée au dépôt et à la diffusion de documents scientifiques de niveau recherche, publiés ou non, émanant des établissements d'enseignement et de recherche français ou étrangers, des laboratoires publics ou privés.

Արեստակես Սիմավորյան
Վահրամ Հովյան

ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼՆԵՐԸ

Երևան
2018

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3
Ս 500

Գիրքը հրատարակվում է
ՀՀ Սփյուռքի նախարարության դրամաշնորհով,
«Նորավանք» ԳԿՀ Գիտական-փորձագիտական խորհրդի
որոշման հիման վրա

Գիտական խմբագիր՝
ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն

Սիմավորյան Արեստակես, Հովյան Վահրամ

Ս 500 ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼՆԵՐԸ/ Ա.Սիմավորյան, Վ.Հովյան. - Եր.: «Նորավանք» ԳԿՀ, 2018. - 134 էջ:

Գիրքը նվիրված է Հայաստան-սփյուռք համագործակցության մոդելներին: Հայկական և միջազգային փորձի հիման վրա մատնանշվում են տարբեր ձևաչափեր, գնահատվում է դրանց կիրառականությունը հայ իրականության մեջ: Ցույց են տրվում նաև մոդելների գործարկման ուղիները: Հատուկ ուշադրություն է դարձվում սփյուռքի ինքնակազմակերպման խնդրին, որի լուծման համար նույնպես առաջարկվում են որոշ մոդելներ:

Գիրքը նախատեսված է ընթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3

© ՀՀ Սփյուռքի նախարարություն, 2018
© «Նորավանք» ԳԿՀ, 2018

ISBN 978-9939-825-39-7

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ …..... 5

ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՄՈԴԵԼՆԵՐԸ. ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՓՈՐՁ 9

ՍՓՅՈՒՌՔԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐՈՒԺ.
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ 27

ՍՓՅՈՒՌՔԻ ԻՆՔՆԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ.
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՄՈԴԵԼՆԵՐ 84

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 105

ԱՄՓՈՓՈՒՄ 115

РЕЗЮМЕ 121

SUMMARY 127

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայրենիք-սփյուռք հարաբերությունները ենթադրում են փոխշահավետ համագործակցություն տարբեր ոլորտներում: Այդ համագործակցության արդյունավետության բարձրացման հրամայականն էլ սփյուռք ունեցող շատ երկրների մշտապես պահում է հարաբերությունների լավագույն ուղիների ու մեթոդների փնտրտուքի մեջ: Այս համատեքստում մշակվում և կատարելագործվում են պետություն-սփյուռք գործակցության զանազան ձևաչափեր ու մոդելներ:

Հայաստանը նույնպես, որպես սփյուռք ունեցող պետություն, մշտապես համագործակցության մեջ է եղել արտերկրի իր անհատ հայրենակիցների, համայնքների և կառույցների հետ: Այդ հարաբերություններում տասնամյակներ շարունակ կիրառվել են տարբեր մեթոդներ ու ձևաչափեր: Սակայն հայ իրականության մեջ պետություն-սփյուռք արդյունավետ փոխգործակցության մոդելներ դեռևս մշակված չեն: Այս խնդիրն ունի ռազմավարական նշանակություն՝ հաշվի առնելով աշխարհաքաղաքական և տարածաշրջանային իրողություններից բխող մարտահրավերները հայության համար, երկրի տնտեսական, գիտակրթական, ժողովրդագրական, ռազմա-

կան զարգացման հրամայականը և սփյուռքի դերն ինչպես հայության անվտանգության, այնպես էլ հայկական երկու պետությունների (Հայաստանի Հանրապետություն և Արցախի Հանրապետություն) առաջընթացն ապահովելու գործում:

Հարկ է նշել, որ պետություն-սփյուռք համագործակցության մոդելները, որքան էլ նախատեսված լինեն երկարաժամկետ կիրառության համար, այնուամենայնիվ, քարացած ձևաչափեր չեն: Պայմանավորված հանգամանքների փոփոխությամբ (աշխարհաքաղաքական և տարածաշրջանային նոր իրողություններ, երկրի և հայության ներուժի աճ և այլն)՝ դրանք նույնպես կարող են ենթարկվել որոշակի ձևափոխումների:

Հայրենիք-սփյուռք հարաբերությունների համատեքստում մշտապես կարևոր տեղ է զբաղեցնում նաև սփյուռքի ինքնակազմակերպման խնդիրը: Վերջինիս կարևորությունը պայմանավորվում է ողջ սփյուռքը ներկայացնող կազմակերպչական կառույցի անհրաժեշտությամբ, սփյուռքի տարբեր հաստատությունների, համայնքների և անհատների ջանքերի համակարգման հրամայականով, ինչպես նաև հայրենի պետության հետ սփյուռքի հարաբերությունների դյուրինացման խնդրով: Ճիշտ է, պետական հաստատությունները կարողանում են արդյունավետ կապեր հաստատել սփյուռքի առանձին շերտերը ներկայացնող կառույցների հետ, այնուամենայնիվ, բովանդակ սփյուռքի հետ հարաբերություններ հաստատելու տեսանկյունից յուրաքանչյուր պետության հա-

մար շատ ավելի հեշտ ու արդյունավետ է երկխոսել մեկ ընդհանրական մեծ կառույցի, քան համեմատաբար փոքր բազմաթիվ հաստատությունների հետ: Չնայած հայկական սփյուռքի ավելի քան մեկդարյա գոյությանը և այս ընթացքում գործադրված որոշակի ջանքերին, արտերկրի ողջ հայությանը միավորող և ներկայացնող համազգային կառույցի ստեղծումը դեռևս մնում է հայության չլուծված խնդիրներից մեկը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ սույն հետազոտական աշխատանքը նվիրված է հայրենիք-սփյուռք համագործակցության արդյունավետ մոդելների վերհանմանը: Աշխատանքում շոշափվում են տեսական հարցեր, որոնք միաժամանակ կապվում են գործնական քաղաքականության հետ: Փորձ է արվում տալ պետություն-սփյուռք հարաբերությունների մոդելների դասակարգումը՝ հիմնված տարբեր չափանիշների վրա: Հետազոտության շրջանակներում կատարվել է նաև դասակարգման հիման վրա առանձնացված մոդելների գնահատում՝ ըստ կիրառականության. փորձ է արվել պատասխանել այն հարցին, թե առանձնացված մոդելներից յուրաքանչյուրն ինչպիսի պետության և ինչպիսի սփյուռքի դեպքում է կիրառական: Տեսականորեն ցույց է տրվում նաև տարբեր չափանիշներով առանձնացված մոդելների հարաբերակցությունը:

Չնայած հայրենիք-սփյուռք հարաբերություններն ընդգրկում են գործունեության լայն շրջանակ՝ քաղաքական, տնտեսական, գիտակրթական, մարզամշակութային և այլն, այնուամենայնիվ, սույն հետազոտության մեջ շեշտն առավե-

լապես դրվել է գիտակրթական ոլորտի և առհասարակ՝ մասնագիտական սփյուռքի հետ համագործակցության վրա՝ մեր օրերում ազգերի և պետությունների անվտանգության ապահովման գործում գիտության վճռորոշ դերով պայմանավորված։ Աշխատանքում ներկայացվում են մասնագիտական սփյուռքի համախմբման ցանցային և այլ մեխանիզմներ, մատնանշվում են համահայկական և տեղական դերակատարները, ցույց են տրվում մի շարք ուղղություններով մինչ այժմ իրականացված որոշ աշխատանքներ։ Առանձին շեշտադրում է կատարվում ընդունված պետական որոշումների և դրանց իրականացման ուղղությամբ ձեռնարկված համազգային և տեղական միջոցառումների վրա՝ ուղղված համահայկական խնդիրների լուծման գործում սփյուռքի ներուժի ընդգրկմանը։

Հատուկ ուշադրություն է դարձվում սփյուռքի ինքնակազմակերպման հարցին։ Այս առնչությամբ նույնպես առանձնացվում են տարբեր մոդելներ, ցույց են տրվում դրանց իրականացման սկզբունքները, ուղիներն ու քայլերը։

Վերոհիշյալ հարցերի քննարկումը, որպես պարտադիր բաղադրիչ, ընդգրկում է մի շարք գործնական առաջարկություններ։

Հետազոտությունը հիմնված է ինչպես հայկական, այնպես էլ միջազգային փորձի ուսումնասիրության վրա։ Աշխատանքի իրականացման ընթացքում օգտագործվել են տեսական և պատմական գրականություն, պետական փաստաթղթեր և մամուլում հրապարակված նյութեր։

ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼՆԵՐԸ. ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՓՈՐՁ

Հայրենիք-սփյուռք հարաբերությունների մոդելները տարբեր չափանիշներով կարելի է դասակարգել տարբեր խմբերի։ Սույն վերլուծության մեջ դասակարգման երկու չափանիշ է վերցվել. ա) հարաբերությունների բնույթը (կառավարման սկզբունքը), բ) հարաբերությունների ձևը։

Համագործակցության մոդելներն ըստ հարաբերությունների բնույթի

Հարաբերությունների բնույթի (կառավարման սկզբունքի) տեսակետից կարող է լինել հայրենիք-սփյուռք համագործակցության երկու մոդել՝ ուղղահայաց և հորիզոնական։

1. *Ուղղահայացի* դեպքում գործում է տիրապետության և ենթակայության սկզբունքը։ Հայրենիք-սփյուռք հարաբերություններն այս պարագայում կրում են աստիճանակարգային բնույթ՝ ղեկավարվելով մեկ կենտրոնից։ Սովորաբար այսպիսի մոդելի դեպքում կառավարման կենտրոնը լինում է հայրենի պետությունը, որը հրա-

հանգում և ուղղորդում է սփյուռքի կառույցների գործունեությունը:

2. *Հորիզոնական* մոդելի դեպքում հայրենի պետությունը և սփյուռքի կառույցները միմյանց նկատմամբ գտնվում են հավասար գործընկերային հարաբերությունների մեջ: Չկա աստիճանակարգության՝ տիրապետության և ենթակայության սկզբունք:

Փորձը ցույց է տալիս, որ համագործակցության ուղղահայաց մոդելը բնորոշ է այն երկրներին, որոնք ունեն համեմատաբար երիտասարդ սփյուռք, այսինքն՝ որոնց արտերկրի համայնքները համեմատաբար նոր են ձևավորվել: Այդ պետությունների պատմությունն ավելի հին է, քան իրենց սփյուռքերինը: Այս դեպքում պետությունն ինքն է ստեղծում սփյուռքյան կառույցներ, հովանավորում դրանց (այդ թվում ֆինանսապես)՝ այդ կերպ նպաստելով սփյուռքի (արտերկրյա համայնքների) ձևավորմանը, կայացմանն ու զարգացմանը: Եվ բնականաբար, եթե պետությունն ինքն է ստեղծում ու ֆինանսավորում սփյուռքի կառույցները, ապա կարող է կամ նույնիսկ պետք է ինքն էլ ուղղորդի նրանց գործունեությունը՝ ուղղահայաց հրահանգավորմամբ:

Այս մոդելի լավագույն օրինակներ են սփյուռքի հետ համագործակցության Թուրքիայի և Ադրբեջանի փորձերը: 2018թ. մարտի վերջին գերմանական ոստիկանության հրապարակայնացրած գաղտնալսումները, համաձայն որոնց՝

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Էրդողանը հեռախոսով ուղղակի հրահանգել է Գերմանիայի թուրքական համայնքին հանրահավաքներով խոչընդոտել Բունդեսթագի կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևի ընդունումը 2016թ. հունիսի 2-ին[1], այս մոդելի դրսևորման լավագույն օրինակ են և միաժամանակ վերոհիշյալ դրույթն ապացուցող լավագույն փաստ: Ինչպես այս առիթով նշում է Գերմանիայի Բունդեսթագի՝ ծագումով քուրդ պատգամավոր Էվրիմ Սոմերը, «Գերմանիոյ մէջ գործող «Օսմանիքն Ճէրմընի Ռոքեր» կազմակերպութիւնը բացէ ի բաց կը գործէ որպէս Թուրքիոյ կառավարութեան ներկայացուցիչը»[2]:

Թուրքական փորձում այս մոդելի դրսևորման մեկ այլ օրինակ է այն, որ 2016թ. հուլիսի 15-ի հեղաշրջման ձախողված փորձից հետո նախագահ Ռ.Էրդողանը կարգադրեց Թուրքիայի կառավարությանն «իր վերահսկողության տակ գտնվող սփյուռքյան կառույցները հակադրել Ֆեթուլա Գյուլենի շարժմանը»[3]:

---

[1] Տե՛ս Էրդողանն անձամբ է հրահանգել Հայոց ցեղասպանության բանաձևի դեմ Բեռլինում ցույցեր կազմակերպել. Der Spiegel-ի բացահայտումը https://armenpress.am/arm/news/927788/turkeyE28099s-erdogan-personally-ordered-to-organize-protests-in-berlin-against-armenian-genocide-recognition.html;
տե՛ս նաև Հայաստանի հանրային հեռուստատեսության «Օրակարգ» ծրագրի 2018թ. մայիսի 27-ի թողարկումը, https://www.youtube.com/watch?v=PubW66jRsj0

[2] Գերմանիոյ մէջ քրտական ծագումով երեսփոխանին որոշումը՝ Հայոց ցեղասպանութեան նիւթին շուրջ, Նոր Մարմարա, 31-ը մարտի, 2018:

[3] *Միմավորյան Ա., Հովյան Վ., Վերանյան Կ.,* Իսրայելի, Իրանի, Թուրքիայի, Ադրբեջանի քաղաքականությունը սփյուռքի նկատմամբ, Եր., «Հայկարլի», 2017, էջ 206:

Ինչ վերաբերում է ադրբեջանական սփյուռքին, ապա այստեղ պետություն-սփյուռք ուղղահայաց հարաբերությունների արտահայտություն են հանդիսանում հետևյալ հանգամանքները[4].

- *Արտասահմանում պետության կողմից համայնքային կառույցների ձևավորումը:* Ներկայում այդպիսի կառույցների թիվն անցնում է 450-ից:
- Դրանց ֆինանսական աջակցությունը:
- *Պետության կողմից համասփյուռքյան կառույցների ստեղծումը և անմիջական ղեկավարումը:* Ադրբեջանում 2002թ. ստեղծվեց Սփյուռքի հետ աշխատանքի պետական կոմիտեն: Նախորդ տարի պետության նախաձեռնությամբ անցկացվել էր Ադրբեջանցիների համաշխարհային հիմնադիր կոնգրեսը, որն ունի իր տեղական և տարածաշրջանային կառույցները և որի բարձրագույն ղեկավարությունն իրականացվում է պետական իշխանությունների կողմից: Վերոհիշյալ պետական կոմիտեի ստեղծմանը հաջորդեց նաև Աշխարհի ադրբեջանցիների համակարգող խորհրդի ստեղծումը:

Հորիզոնական մոդելը գործում է այն երկրների դեպքում, որոնց սփյուռքերը հին են և կայացած: Այս դեպքում պետությունն ինքը չէ, որ ստեղծում է սփյուռքյան կառույց-

[4] *Sassounian H.,* Azerbaijan Organizes its Own Diaspora To Compete With the Armenian Diaspora, The California Courier, July 24, 2018.

ներ, քանի որ դրանք արդեն իսկ առկա են, կայացած, ունեն տասնամյակների և անգամ հարյուրամյակների պատմություն։ Որոշ դեպքերում սփյուռքյան կառույցներն ավելի հին են, քան իրենց հայրենի պետությունները։ Հետևաբար, եթե պետությունը չի ստեղծում սփյուռքի կառույցներ, ոչ էլ ֆինանսավորում է վերջիններիս, ապա նրա համար անչափ դժվար կամ գուցե անհնար է հրահանգավորելով ուղղորդել նրանց գործունեությունը։ Այդ պարագայում համագործակցությունը հիմնվում է հավասար գործընկերության սկզբունքի վրա, որն էլ ընկած է հորիզոնական մոդելի հիմքում։

Համագործակցության հորիզոնական մոդելի օրինակներ են հայրենիք-սփյուռք հարաբերությունների Հայաստանի և Իսրայելի փորձերը։ Ինչպես հայկական, այնպես էլ հրեական սփյուռքում կան կառույցներ, որոնք ձևավորվել են նախքան հայկական և հրեական պետությունների վերականգնումը։ Հայ իրականության մեջ, օրինակ, երեք ավանդական կուսակցությունները (ՀՅԴ, ՍԴՀԿ, ՌԱԿ[5]), ՀԲԸՄ-ն (ստեղծվել է 1906թ.) և այլ կառույցներ ձևավորվել են նախքան 1918թ. Հայաստանի անկախության վերականգնումը։ Նկատի ունենալով, որ խորհրդային տարիներին կար որոշակի անջրպետ հայրենիք-սփյուռք հարաբերություններում, արժե հիշատա-

[5] ՌԱԿ-ը հիմնվել է 1921թ.՝ ազատական ուղղության հայկական կուսակցությունների և կազմակերպությունների միավորմամբ։ Նրա նախապատմությունը սկսվում է 1885թ. Վանում Արմենական կազմակերպության հիմնմամբ, տե՛ս «Հայ սփյուռք» հանրագիտարան, Եր., «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2003, էջ 723։

կել, որ այդ շրջանում սփյուռքում հիմնված կառույցները (օրինակ՝ Համազգային հայ կրթական և մշակութային միությունը) նույնպես չէին կարող ստեղծված լինել կամ ֆինանսավորվել հայրենի պետության կողմից:

Ինչ վերաբերում է հրեական սփյուռքին, ապա վերջինիս ամենահեղինակավոր կառույցը՝ Հրեական համաշխարհային կոնգրեսը, որը ներկայացնում է աշխարհի հարյուր երկրի հրեական համայնքներն ու կազմակերպությունները[6], ստեղծվել է 1936թ.՝ Իսրայելի պետության հիմնադրումից (1948թ.) տասներկու տարի առաջ: Ավելին, հրեական սփյուռքի պարագայում ոչ միայն հայրենի պետությունը չէ, որ ստեղծել է սփյուռքի կառույցները, այլև հակառակը՝ սփյուռքն է ստեղծել Իսրայել պետությունը[7]:

Ինչպես նշվեց վերը, հորիզոնական մոդելի դեպքում հայրենիք-սփյուռք հարաբերությունները (համագործակցությունը) հիմնված են լինում հավասար գործընկերության սկզբունքի վրա: Հայ իրականության մեջ դրա դրսևորումները վառ արտահայտված են եղել դեռևս Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին (1918-1920թթ.), մասնավորապես՝ 1919թ. բացված Փարիզի խաղաղության վեհաժողովում: Ինչպես հայտնի է պատմությունից, այդ վեհաժողովին

[6] Հրեական համաշխարհային կոնգրեսի կայք, http://www.worldjewishcongress.org/en/about

[7] *Հակոբյան Հ.Վ.,* Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական ու իրավական հիմքերը, Եր., «Ասողիկ», 2002, էջ 87-125:

մասնակցելու համար Փարիզ էր մեկնել երկու հայկական պատվիրակություն։ Դրանցից մեկը Հայաստանի Հանրապետության (որպես պետության) պատվիրակությունն էր՝ խորհրդարանի նախագահ Ավետիս Ահարոնյանի գլխավորությամբ, իսկ մյուսը՝ Հայոց ազգային պատվիրակությունը (որպես բովանդակ հայության կամ հայկական սփյուռքի պատվիրակություն)՝ եգիպտահայ մեծահարուստ, բարերար, ՀԲԸՄ հիմնադիր Պողոս Նուբարի գլխավորությամբ[8]։ Եվ չնայած երկու պատվիրակությունների միջև առկա հակասություններին, ոչ միանշանակ վերաբերմունքին միմյանց նկատմամբ, ի վերջո քննարկումների արդյունքում նրանց հաջողվեց գալ համաձայնության և վեհաժողովին ներկայացնել հայության պահանջների վերաբերյալ միասնական փաստաթուղթ՝ հուշագիր[9]։

[8] Հայոց ազգային պատվիրակությունը՝ Պողոս Նուբարի գլխավորությամբ, ստեղծվել էր նախքան Հայաստանի Հանրապետության հռչակումը՝ 1912թ., հայության դատը տերությունների մոտ պաշտպանելու նպատակով։ 1912թ. Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ 5-րդը հատուկ կոնդակով լիազորել է Պողոս Նուբարին հանդես գալ բովանդակ հայության անունից, այսինքն՝ ներկայացնել հայկական շահերը Առաջին համաշխարհային պատերազմին ուղեկցող և դրան հաջորդելիք քաղաքական գործընթացներում։

[9] *Վրացյան Ս.,* Հայաստանի Հանրապետություն, Եր., «Հայաստան», 1993, էջ 269-308, 362-365; *Խատիսեան Ակ.,* Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Բ. տպագրութիւն, Պէյրութ, տպարան «Համազգային», 1968, էջ 151, 232-233; *Մելիքեան Վ.,* Արևմտահայերի համագումարները և հայկական հարցի փուլերը 1917-1923թթ., Եր., «Զանգակ-97», 2007, էջ 51-77։

Համագործակցության մոդելներն ըստ հարաբերությունների ձևի

Հայրենիք-սփյուռք համագործակցության մոդելները, ըստ հարաբերությունների ձևի, կարելի է բաժանել կրկին երկու տեսակի, որոնք պայմանականորեն անվանում ենք «Միասնական ջանք» և «Միասնական օրակարգ».

1. *«Միասնական ջանք»* մոդելը կարելի է բնութագրել որպես կենտրոնացված համագործակցություն։ Այս դեպքում հայրենիք-սփյուռք հարաբերությունները համակարգող կենտրոնից, որը, ենթադրվում է, պետք է լինի պետությունը, սփյուռքյան կառույցները բերվում են մի հարկի տակ, առաջ են քաշվում գործողությունների նպատակը, այդ նպատակներին հասնելու միջոցները, հաշվառվում են առկա և անհրաժեշտ ռեսուրսները, տեղի է ունենում գործառույթների և դերերի բաշխում՝ այդ նպատակին հասնելու համար։ Ընդհանուր նպատակը և դրան հասնելու միջոցներն ունենում են հստակ ծրագրային ձևակերպում։ Կարճ ասած՝ «Միասնական ջանք» մոդելը ենթադրում է պետության ղեկավարությամբ սփյուռքյան կառույցների սերտ համագործակցություն որևէ կոնկրետ ծրագրի (նպատակի) իրականացման ուղղությամբ։
2. *«Միասնական օրակարգ»* մոդելը կրկին ենթադրում է պետության կողմից ընդհանուր նպատակների սահմանում, սակայն չի ենթադրում սփյուռքյան կառույցների

միջև սերտ համագործակցություն դրանց իրականացման համար: Դրա փոխարեն ենթադրվում է, որ վերջիններից յուրաքանչյուրն առանձին պետք է հասնի սահմանված նպատակին: Այս համատեքստում սփյուռքյան կառույցներից յուրաքանչյուրը պետք է ունենա դրված նպատակին հասնելու սեփական ծրագիր: Այլ կերպ ասած՝ սույն մոդելի դեպքում պետությունը հանդես է գալիս միայն օրակարգ առաջադրողի դերում՝ վերջինից բխող կոնկրետ գործողությունների և ծրագրերի իրականացումը թողնելով սփյուռքյան առանձին կառույցներին:

«Միասնական ջանք» մոդելը կիրառելի է խոշոր (մեգա) նախագծերի իրականացման դեպքում, երբ դրված խնդրի լուծման համար անհրաժեշտ են մեծ միջոցներ: Նման նախագծերի իրականացումը սովորաբար վեր է լինում որևէ առանձին կազմակերպության հնարավորություններից և, հետևաբար, ենթադրում է ջանքերի և միջոցների մեկտեղման հրամայականը:

Հայ իրականության մեջ հայրենիք-սփյուռք համագործակցության «Միասնական ջանք» մոդելն ունեցել է դրսևորումներ ինչպես անցյալում (պատմության մեջ), այնպես էլ ներկայում: Անցյալում սույն մոդելի դրսևորման լավագույն օրինակ կարելի է համարել 1946-48թթ. Մեծ հայրենադարձության՝ որպես խոշոր (մեգա) նախագծի իրականացման համա-

տեքստում Խորհրդային Հայաստանի համագործակցությունը սփյուռքի համազգային կառույցների հետ, որի շնորհիվ վերջիններս իրենց միջոցներով մեծապես նպաստեցին այդ գործընթացի իրականացմանը: Սփյուռքի ավանդական կառույցներից Մեծ հայրենադարձությանն ամենամեծ նպաստը բերեց ՀԲԸՄ-ն, որի վրա ընկավ գործընթացի ֆինանսական ապահովման հիմնական ծանրությունը[10]: Մյուս կառույցները (ՀՅԴ, ՌԱԿ, ՍԴՀԿ, ՀԱԵ և այլն) նույնպես իրենց կազմակերպչական, ֆինանսական և այլ հնարավորություններով մասնակիցը եղան այդ մեծ նախագծի իրականացմանը[11]:

[10] Մանրամասն տե՛ս *Մելքոնյան Էդ.,* Հայկական բարեգործական ընդհանուր միությունը 1946-1948թթ. հայրենադարձության գործընթացում, «1946-1948թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր» համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., Լիմուշ, 2009, էջ 60-68:

[11] Տե՛ս *Մաղաթելյան Բ.,* 1946-1948թթ. հայրենադարձությունը և Հայ հեղափոխական դաշնակցությունը, «1946-1948թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր» համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., Լիմուշ, 2009, էջ 85-93, *Առաքելյան Հ.,* Ռամկավար ազատական կուսակցության դերակատարությունը 1946-1948թթ. հայրենադարձության կազմակերպման գործընթացում, «1946-1948թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր» համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., Լիմուշ, 2009, էջ 75-84, *Լէփէճեան Կ.,* Հայրենադարձությունը և ՍԴՀԿ-ի դերակատարությունը, «1946-1948թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր» համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., Լիմուշ, 2009, էջ 69-74, *Պողոսյան Վ., Դավթյան Ա.,* 1946-1948թթ. հայրենադարձությունը և Հայ Առաքելական եկեղեցու գործունեությունը, «1946-1948թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր» համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., Լիմուշ, 2009, էջ 380-391, *Հարությունյան Լ.,* Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Զ. Չորեքչյանի դերակատարությունը 1946-1948թթ. հայրենադարձության կազմակերպման գործում, «1946-1948թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր» համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., Լիմուշ, 2009, էջ 372-379:

Նորագույն շրջանում «Միասնական ջանք» մոդելով հայրենիք-սփյուռք համագործակցության դրսևորումներ են «Հայաստան» համահայկական հիմնադրամի ամենամյա մարաթոնները, որոնք սովորաբար նվիրված են լինում որևէ կոնկրետ խնդրի լուծմանը: Առայսօր կարելի է առանձնացնել երեք հիմնական խոշոր (մեգա) նախագիծ, որոնք իրականացվել են հիմնադրամի ամենամյա դրամահավաք-մարաթոններով: Դրանք ՀՀ-ն Արցախի Հանրապետության հետ կապող, ինչպես նաև Արցախի ներքին հաղորդակցային ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված հետևյալ նախագծերն են.

ա) Գորիս-Բերձոր-Շուշի-Ստեփանակերտ ավտոմայրուղին, որը ՀՀ-ն Արցախի հետ կապող առաջին ցամաքային ուղին է և կենսական նշանակություն ունի Արցախի համար,

բ) Արցախի ողնաշարը համարվող Հյուսիս-Հարավ ավտոմայրուղին, որը վճռական նշանակություն ունի հայկական երկրորդ հանրապետության տնտեսության, ինչպես նաև անվտանգության համար,

գ) Վարդենիս-Մարտակերտ ավտոմայրուղին, որը ՀՀ-ն ԱՀ-ի հետ կապող երկրորդ կենսական հաղորդակցային ուղին է, անմիջական կապ է հաստատում ՀՀ-ի և ԱՀ-ի հյուսիս-արևելյան շրջանի հետ և նույնպես կարևոր նշանակություն ունի հայկական երկրորդ հանրապետության տնտեսության զարգացման և անվտանգության ապահովման տեսակետից:

Թե ինչ նշանակություն ունեն վերոհիշյալ հաղորդակցային ուղիները ՀՀ-ի և Արցախի համար՝ կարելի է դատել ՀՀ առաջին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամի դերի մասին դեռևս 1997թ. տրված այն գնահատականից, որ եթե հիմնադրամն ուրիշ ոչինչ արած չլիներ, միայն Գորիս-Բերձոր-Շուշի-Ստեփանակերտ ավտոմայրուղու կառուցումը բավարար է, որպեսզի նրա գոյությունն արդարացված լինի[12]:

2017թ. «Հայաստան» համահայկական հիմնադրամի հեռուստամարաթոնի ընթացքում հանգանակված գումարն ուղղվել է Արցախի ոռոգման ցանցի զարգացմանը, ինչը վճռական նշանակություն ունի հայկական երկրորդ հանրապետության գյուղատնտեսության և, ընդհանրապես, տնտեսության զարգացման համար:

Այսպիսով, քանի որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի մարաթոններին մասնակցում են կառույցներ ու անհատներ ինչպես սփյուռքից, այնպես էլ ՀՀ-ից և ԱՀ-ից, ապա այդ մարաթոնների հանգանակություններով իրականացված վերոհիշյալ խոշոր (մեգա) նախագծերը, հիրավի, կարելի է համարել Երրորդ հանրապետության պատմության ընթացքում «Միասնական ջանք» մոդելով Հայաստան-սփյուռք համագործակցության ամենանշանակալի դրսևորումները:

[12] *Տեր-Պետրոսյան Լ.,* Ընտրանի. ելույթներ, հոդվածներ, հարցազրույցներ, Եր., «Փրինթինֆո», 2006, էջ 607:

«Միասնական օրակարգ» մոդելն ավելի կիրառելի է փոքր կամ միջին նախագծերի իրականացման դեպքում, որոնք չեն պահանջում հսկայական միջոցներ և կարող են իրականացվել առանձին կազմակերպությունների կողմից։ Ավելին, այս դեպքում «Միասնական օրակարգ» մոդելը ոչ միայն կիրառական է, այլև ավելի նպատակահարմար։ Եթե առաջ է քաշվում որևէ համեմատաբար փոքր խնդիր (օրինակ՝ դպրոցի հիմնում), ապա դրա միասնաբար իրականացումը կարող է ոչ միայն արդյունավետ չլինել, այլև ընդհանրապես տապալվել՝ սփյուռքյան կազմակերպությունների մրցակցության, հավակնությունների և այլ պատճառներով։ Մինչդեռ «Միասնական օրակարգ» մոդելի կիրառման դեպքում սփյուռքյան կազմակերպություններից յուրաքանչյուրը (դիցուք՝ երեք կուսակցությունները) առանձին-առանձին հիմնում են սեփական դպրոցները։ Այսինքն՝ խնդրի իրականացումը ոչ միայն չի տապալվում, այլև հաջողվում է բազմապատիկ արդյունավետությամբ։

Այսպիսով, «Միասնական օրակարգ» մոդելի պարագայում ընդհանուր նպատակի դերում հանդես է գալիս ընդհանուր գաղափարը կամ տեսլականը (օրինակ՝ դպրոցների հիմնում), մինչդեռ դրա իրականացման ծրագրերը լինում են առանձին և փոքր-ինչ յուրահատուկ յուրաքանչյուր կազմակերպության համար։

Հայ իրականության մեջ հայրենիք-սփյուռք համագործակցության «Միասնական օրակարգ» մոդելի ամենաթարմ

դրսևորումներից է ՀՀ Սփյուռքի նախարարության կողմից 2016թ. հոկտեմբերի 20-24-ը Լրագրողների համահայկական 8-րդ համաժողովում նախաձեռնված «Դու ի՞նչ ես անում Արցախի համար» շարժումը: Միասնական օրակարգի առաջադրմամբ և սփյուռքի յուրաքանչյուր կազմակերպությանն ու անհատին այդ միասնական օրակարգի շրջանակներում անհատապես գործելու հնարավորություն տալով հնարավոր եղավ հասնել որոշակի արդյունքի: Շարժման շրջանակներում սփյուռքում ոմանք փորձեցին դեղորայքով օգնել Արցախի հիվանդանոցներին, ոմանք՝ բժշկական սարքավորումներ և գույք գնելով և առաքելով, ոմանք՝ շտապ օգնության մեքենաներ ձեռք բերելով և ուղարկելով, ոմանք՝ մեքենաներ նվիրաբերելով Պաշտպանության բանակին, ոմանք՝ երաժշտական գործիքներ նվիրաբերելով Արցախի երաժշտական կրթական հաստատություններին, ոմանք՝ պարզապես գումարով և այլն: Այս ամենը առանձին-առանձին վերցրած փոքր նշանակություն ունեցող աջակցություն է: Սակայն դրանց հանրագումարը զգալի նպաստ է Արցախի երիտասարդ պետականության կայացման համար:

Հայրենիք-սփյուռք գործակցության միասնական օրակարգի ձևավորման լավագույն հարթակ կարող են լինել Հայաստան-սփյուռք համաժողովները: Այդպիսի փորձ արդեն իսկ գոյություն ունի: Խոսքը 2006թ. տեղի ունեցած Հայաստան-սփյուռք երրորդ համաժողովի մասին է, որի ընթացքում որպես հիմնական խնդիր ՀՀ իշխանությունների կողմից

դրվեց Հայաստանի գյուղական, հատկապես սահմանամերձ համայնքների զարգացումը[13]: Ենթադրվում է, որ համաժողովից հետո սփյուռքի կառույցները և անհատ սփյուռքահայերը պետք է յուրաքանչյուրն իր կարողության չափով նպաստ բերեր այդ խնդրի իրականացմանը: Թե ինչ քայլեր են իրականացվել այդ համաժողովից հետո Հայաստանի գյուղական համայնքների զարգացման նպատակով Հայաստանի և սփյուռքի կողմից՝ այլ ուսումնասիրության նյութ է: 2017թ. հայրենիք-սփյուռք վեցերորդ համաժողովին հնչեցված նպատակային դրույթը 2040թ. Հայաստանի բնակչությունը չորս միլիոնի հասցնելու մասին նույնպես կարելի է դիտել որպես հայրենիք-սփյուռք գործակցության միասնական օրակարգի ձևավորման փորձ:

Հայաստան-սփյուռք համաժողովներում միասնական օրակարգի ձևավորումը, այնուամենայնիվ, ենթադրում է, որ այն պետք է վերածվի՝ ա) լուրջ խոսույթի (դիսկուրս) ինչպես համաժողովի ընթացքում, այնպես էլ դրանից հետո (տեսական հարթություն) և բ) լուրջ շարժման (գործնական հարթություն):

Այս խնդրի լուծման համար նպատակահարմար կլինի այսուհետ «Հայաստան» համահայկական հիմնադրամի ամենամյա մարաթոնների օրինակով Հայաստան-սփյուռք համաժողովները կազմակերպել կոնկրետ խնդիրների շուրջ, որոնք

[13] *Հովյան Վ.,* Հայաստան-Սփյուռք երրորդ խորհրդաժողով. նախնական ամփոփում, Երկիր, 3-ը նոյեմբերի, 2006:

էլ կլինեն այդ համաժողովների օրակարգը։ Դրա համար անհրաժեշտ է.

1. նախօրոք սահմանել այն գաղափար-նպատակը, որը պետք է դրվի տվյալ համաժողովի օրակարգում, և այդ մասին իրազեկել համաժողովի մասնակիցներին համաժողովից նվազագույնը երեք ամիս առաջ,
2. համաժողովների խոսույթը (ելույթներ, քննարկումներ և այլն) կառուցել երկու հիմնական բաղադրիչի վրա.
   - հաշվետվություն նախորդ համաժողովում առաջադրված օրակարգային գաղափար-նպատակի իրականացման վերաբերյալ (թե կոնկրետ որ կառույցի կողմից ինչ քայլեր են ձեռնարկվել այդ ուղղությամբ),
   - նոր համաժողովում առաջ քաշված օրակարգի իրականացման վերաբերյալ նախատեսվող քայլեր[14]։

Այս կերպ Հայաստան-սփյուռք համաժողովները, ինչպես նաև հայկական հանրությունը (Հայաստան, սփյուռք) կշահեն հետևյալ առումներով.

1. Համաժողովների խոսույթը վերացականությունից անցում կկատարի կոնկրետ գործնական հարթություն, ինչի արդյունքում զգացմունքային հայրենասիրությունը, որը նույնպես կարևոր է և անհրաժեշտ, կզու-

[14] Այս դրույթը չի նշանակում, որ նախատեսվող քայլերի վերաբերյալ հայտարարություններն ունեն հրամայական խոստման ուժ և պետք է անշեղորեն կատարվեն։ Գործնականում նախատեսվող քայլերի իրականացման ժամանակ թույլատրելի են նաև որոշակի շեղումներ հնչեցված հայտարարություններից։

գակցվի նպատակային-ծրագրային քայլերի վերաբերյալ դատողություններով։

2. Համաժողովների միջև ընկած ժամանակաշրջանը կդառնա կարճաժամկետ կամ միջնաժամկետ խնդիրների լուծման շրջան։ Միջնաժամկետ կամ կարճաժամկետ՝ այն պատճառով, որ այդ ժամանակահատվածում (2-4 տարի) հնարավոր է իրականացնել միայն այդպիսի ծրագրեր։ Կամ էլ՝ Հայաստան-սփյուռք համաժողովների միջև ընկած ժամանակահատվածները կարող են լինել որևէ երկարաժամկետ ռազմավարական խնդրի առանձին փուլերի՝ մարտավարական խնդիրների իրականացման շրջաններ։

Ամփոփելով նշենք, որ տեսականորեն կա նաև որոշակի հարաբերակցություն մի կողմից՝ հայրենիք-սփյուռք հարաբերությունների (համագործակցության) ուղղահայաց ու հորիզոնական և մյուս կողմից՝ «Միասնական ջանք» ու «Միասնական օրակարգ» մոդելների միջև։ «Միասնական ջանք» մոդել ավելի կիրառական է պետություն-սփյուռք ուղղահայաց հարաբերությունների պարագայում։ Եթե պետությունն ինքն է ուղղորդում սփյուռքի կառույցների գործունեությունը, ապա այն էլ կարող է որևէ կոնկրետ խնդրի լուծման նպատակով միասնական գործողությունների դաշտ բերել վերջիններիս, իրականացնել դերերի և գործառույթների բաշխում, համակարգել նրանց գործունեությունը տվյալ խնդրի իրականաց-

ման համատեքստում։ Մինչդեռ պետություն-սփյուռք հորիզոնական հարաբերությունների դեպքում առավել կիրառական է «Միասնական օրակարգ» մոդելը։ Եթե պետությունը չունի սփյուռքի կառույցներին հրահանգելու կամ նրանց գործունեությունը թելադրելու գործուն մեխանիզմներ, ապա առավել նպատակահարմար է առաջադրել օրակարգ՝ դրա իրականացումը թողնելով սփյուռքի կառույցներին, որպեսզի նրանցից յուրաքանչյուրը յուրովի իրականացնի առաջադրված խնդիրը։

ՍՓՅՈՒՌՔԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐՈՒԺ. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Սփյուռքի մասնագիտական հանրույթների հետ կայուն և արդյունավետ փոխգործակցության կամուրջներ հիմնելը սփյուռք ունեցող մի շարք պետությունների համար դարձել է հրամայական: Հայրենական գիտակրթական համակարգի բարեփոխման, բարձր տեխնոլոգիաների և այլ գիտաճյուղերում նրանց մասնագիտական կարողությունների ներդրման ու համագործակցության խթանման նպատակով ստեղծվել են սփյուռքում բնակվող գիտնականների վերաբերյալ տեղեկատվական շտեմարաններ, նրանց միավորող ռեսուրսներ (համացանցային պորտալներ, ինստիտուցիոնալ կառույցներ և այլն), քանական և որակական գնահատականներ ստանալու համար իրականացվում է մշտադիտարկում: Հաշվի առնելով այս հարցի հետ կապված սփյուռքի տեսակետներն ու մտահոգությունները՝ հետազոտվում են համագործակցության հնարավոր եղանակներն ու մեխանիզմները, այդ հարաբերությունների ստեղծման ճանապարհին ի հայտ եկող խոչընդոտների հաղթահարմանն ուղղված ռազմավա-

րական քայլերի ողջ համալիրը, փոխադարձ ակնկալիքները, միջազգային փորձը, հայրենադարձության և այլ հարցեր[15]:

Հարկ է նկատել, որ համապետական նշանակության տարբեր նախագծերի շրջանակներում սփյուռքի գիտական/մասնագիտական ներուժին ուղղված քայլեր են ձեռնարկում հետխորհրդային պետություններից՝ Ռուսաստանի Դաշնությունը, Ադրբեջանը, Մոլդովան, Բելառուսը, Ղազախստանը, հարևան երկրներից՝ Թուրքիան, Իրանը, ավելի գլոբալ՝ Չինաստանը, Հնդկաստանը, Արգենտինան և այլ պետություններ: Սա վկայում է, որ քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ բնագավառներից բացի, կարևոր նշանակություն ունի նաև հայրենիք-սփյուռք գործակցությունը գիտության և ընդհանրապես մտավոր գործունեության ոլորտում, քանի որ հատկապես ժամանակակից աշխարհում դժվար է գերագնահատել մտավոր ներուժի դերն ազգերի և պետությունների հաջողություններում:

Գիտության ոլորտի կրիտիկականությունը հայրենիք-սփյուռք կապերում հատկապես նրանում է, որ այն կոչված է

[15] Տե՛ս *Simavorian A.,* La diáspora, como potencial para el país: la experiencia internacional, «Sardarabad», Miércoles 12 de marzo de 2014, *Tejada, G., Varzari, V., Porcescu, S.*, Scientific diasporas, transnationalism and home-country development: Evidence from a study of skilled Moldovans abroad. Journal of South East European and Black Sea Studies 13 (2), 2013, *Имамутдинов И., Костина Г., Медовников Д., Механик А., Оганесян Т., Розмирович С., Рубан О., Савеленок Е., Точенов А.,* Исследование российской научно-технологической диаспоры в развитых странах: условия и возможности возвращения научных кадров и использование потенциала, Москва, Инновационное бюро «Эксперт», 2009, *Артюхин М., Мееровская О.,* Научная диаспора как ресурс развития белорусской науки, Социологический альманах, Выпуск № 3, 2012 և այլն:

ապահովելու յուրաքանչյուր երկրի զարգացումը: Առանց զարգացման՝ ցանկացած երկիր դատապարտված է լճացման և «գաղութացման» հզոր պետությունների կողմից: Խոսքն առավել ևս վերաբերում է Հայաստանին, որն ունի սահմանափակ տարածք, սահմանափակ բնական հարստություններ, անբարենպաստ աշխարհագրական դիրք (նկատի ունենք դեպի ծով ելքի բացակայությունը), անբարենպաստ քաղաքական միջավայր (շրջափակվածությունը Թուրքիայի և Ադրբեջանի կողմից):

Հարկ է նշել, որ Խորհրդային Միության անկումից հետո տնտեսության, մշակույթի և հասարակական կյանքի այլ ոլորտների հետ միասին ծանր հարված ստացավ նաև գիտությունը: Դա պայմանավորված էր հետևյալ հիմնական հանգամանքներով.

- *Գիտության ոլորտի ֆինանսավորման կտրուկ անկում:* Ընդհանուր տնտեսական ճգնաժամը հանգեցրեց նաև պետության կողմից գիտության ոլորտի հատկացումների կտրուկ նվազմանը: Եթե խորհրդային տարիներին Հայաստանում գիտության ոլորտին հատկացվող գումարը կազմում էր մոտ $600 մլն-ին համարժեք գումար[16], ապա այժմ այդ գումարը կազմում է մոտ $25 մլն[17]:

[16] Խոսքը պաշտոնական՝ հրապարակային ֆինանսավորման մասին է: Սակայն խորհրդային տարիներին կար նաև գիտության ոլորտի ոչ պաշտոնական՝ ստվերային ֆինանսավորում: Ստվերային հատկացումների հետ միասին խորհրդային տարիներին Հայաստանում գիտությանը հատկացվում էր մոտ $1 մլրդ:

[17] Հայաստանում գիտության ֆինանսավորումը ամենացածրներից մեկն է Եվրոպայում, http://www.7or.am/am/news/view/55633/

- *Գիտատար արդյունաբերության քայքայում:* Ընդհանուր տնտեսական անկման համապատկերում քայքայվեցին նաև գիտատար արդյունաբերության շատ ճյուղեր, փակվեցին բարձրտեխնոլոգիական շատ գործարաններ: Արդյունքում՝ նվազեց այդ գիտատար արդյունաբերության ճյուղերի համար համապատասխան հետազոտությունների, ինչպես նաև տեխնոլոգիական գործարաններն անհրաժեշտ բարձրորակ կադրերով (ինժեներներ, ծրագրավորողներ և այլն) ապահովելու անհրաժեշտությունը:
- *«Ուղեղների արտահոսք»:* Գիտության ոլորտում նկատվող լճացման և կազմալուծման միտումները հանգեցրին նաև մեծ թվով գիտաշխատողների արտագաղթին: Գիտության մեջ «ուղեղների արտահոսք» ասելով նկատի են առնվում նաև գիտաշխատողների մասնագիտական գործունեությունը դադարեցնելը և այլ բնույթի գործունեությամբ զբաղվելը:
- *Նախկին խորհրդային երկրների հետ գիտական կապերի խզումը:* Նախկին խորհրդային երկրներն ինտեգրված էին ոչ միայն տնտեսապես, քաղաքականապես, ռազմապես, այլ նաև գիտության ոլորտում: Հայաստանն իր ուրույն տեղն ուներ ԽՍՀՄ գիտության համակարգում և կոչված էր սպասարկելու այդ հսկա կայսրության պահանջները: ԽՍՀՄ անկմամբ մի կողմից՝ խզվեցին գիտական կապերը նախկին խորհրդային մյուս հանրա-

պետությունների հետ, մյուս կողմից՝ Հայաստանի գիտությունն այլևս չէր սպասարկում Խորհրդային Միության պահանջները և ստանձնում էր նոր առաքելություն՝ սպասարկել միայն Հայաստանի պահանջները։ Գիտության դերի և առաքելության այս կտրուկ փոփոխությունն էլ դարձավ ճգնաժամային երևույթների պատճառ։ Դրա հաղթահարման համար անհրաժեշտ է որոշակի ադապտացիոն շրջան՝ նոր իրողություններին հարմարվելու համար, որը դեռևս շարունակվում է։

Ծանր իրավիճակում հայտնված հայրենիքին սփյուռքը զորավիգ կանգնեց ոչ միայն տնտեսական, սոցիալական, այլև գիտության բնագավառում։ Մինչ դրանց անդրադառնալը հարկ է նշել, որ այդ գործում ներգրավված են այնպիսի համահայկական կառույցներ, որոնց քաղաքականության մեջ առաջնային չեն գիտության հարցերը։ Այնուամենայնիվ, դրանք որոշակի ներդրում են ունեցել և շարունակում են ունենալ տվյալ բնագավառում։

Սփյուռքի ներդրումը Հայաստանի գիտության պահպանման և զարգացման գործում կարելի է դիտարկել երկու հարթությունում՝ մասնավոր ծրագրեր և ինստիտուցիոնալ մեխանիզմներ։

Մասնավոր ծրագրերը մեկանգամյա կամ անհատական փոքր ծրագրեր են՝ գիտության ասպարեզում այս կամ այն կոնկրետ խնդրի լուծման համար։ Ինստիտուցիոնալ մեխա-

նիզմները դրսևորվում են գիտության մեջ շարունակական գործունեություն իրականացնող կառույցների հիմնադրմամբ և գործառնությամբ՝ Հայաստանի գիտության պահպանմանն ու զարգացմանը հիմնարար և տևական նպաստ բերելու համար: Մասնավոր ծրագրերը հիմնականում հանգում են հետևյալին.

- Գիտական հիմնարկների շենքային պայմանները բարելավելու նպատակով իրականացվող վերանորոգչական աշխատանքներ;
- Գիտական հիմնարկներին հետազոտությունների և նորմալ գործառնության համար անհրաժեշտ սարքավորումներով (համակարգչային տեխնիկա, տարբեր սարքավորումներ) տրամադրում;
- Առանձին հետազոտությունների ֆինանսավորում;
- Առանձին հետազոտությունների արդյունքների հրատարակման հովանավորում և այլն:

Մասնավոր ծրագրերը բազմաթիվ են և շարունակվում են առայսօր: Մեծ է ինչպես սփյուռքյան կառույցների, այնպես էլ առանձին բարերարների ավանդը դրանց իրականացման գործում, որոնց, սակայն, չենք անդրադառնա:

Ավելի նպատակահարմար է կենտրոնանալ ինստիտուցիոնալ մեխանիզմների վրա, որոնք, ինչպես արդեն նշվեց, կոչված են հիմնարար նպաստ բերելու Հայաստանի գիտական ենթակառուցվածքին: Հայաստանի գիտության զարգաց-

մանն աջակցելու համատեքստում Սփյուռքի կողմից ստեղծված ինստիտուցիոնալ կառույցները կարելի է բաժանել երկու մասի.

1. գիտակրթական հաստատություններ
2. գիտական հետազոտությունները կանոնավոր կերպով խրախուսող կառույցներ։

Հայաստանում սփյուռքի կողմից գիտակրթական հաստատությունների հիմնման համատեքստում առայսօր իրականացվել է երկու խոշոր նախագիծ։ Առաջինը 1991թ. Հայաստանի ամերիկյան համալսարանի, իսկ երկրորդը՝ 1993թ. Սևանի թերակղզում Վազգենյան հոգևոր դպրանոցի (Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի անվամբ) հիմնադրումն է։ Հարկ է նշել, որ նման խոշոր նախագծերի իրականացումը ենթադրում է լուրջ ֆինանսական միջոցներ, և պատահական չէ, որ այդ երկու հաստատություններն էլ հիմնվել են սփյուռքի խոշոր բարեգործական կառույցի՝ Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով։

Հայաստանի ամերիկյան համալսարանի հիմնադրմամբ, թերևս, նոր՝ արևմտյան գիտակրթական մշակույթն էր ներմուծվում Հայաստան, որը զգալիորեն նպաստեց այստեղ Խորհրդային Միության անկումից հետո նահանջ ապրող գիտակրթական համակարգի պահպանմանն ու զարգացմանը։ Համալսարանի հիմնադրմամբ երկրի գիտակրթական հաստատությունների միջև մրցակցությանը նոր թափ

հաղորդվեց, ինչը լրացուցիչ խթան հանդիսացավ այդ ոլորտի լճացումը կանխելու և զարգացումն ապահովելու համար։ Մրցակցությունն ընթանում էր ոչ միայն և ոչ այնքան հանրապետությունում ավանդաբար գործող և նորաստեղծ գիտակրթական հաստատությունների (ինչպիսին էր, օրինակ, Հայաստանի ամերիկյան համալսարանը), այլև տարբեր գիտակրթական մոդելների (արևմտյան և խորհրդային) միջև։

Հայաստանի ամերիկյան համալսարանը, որը Կալիֆորնիայի համալսարանի Հայաստանի մասնաճյուղն է, սկզբնական շրջանում իրականացնում էր միայն մագիստրատուրայի ծրագրեր։ 2013 թվականից այն որոշ մասնագիտությունների գծով սկսել է իրականացնել նաև բակալավրիատի ծրագրեր։ Բուհի զարգացումը ենթադրում է ինչպես նոր կառուցվածքային ստորաբաժանումների (ֆակուլտետներ և այլն) ստեղծում, այնպես էլ ուսումնական աստիճանների ընդլայնում՝ ասպիրանտուրայի հիմնում։

Հայաստանի ամերիկյան համալսարանի հիմնադրումն օրինակ եղավ հետագայում այստեղ օտարերկրյա այլ բուհերի հիմնադրման համար, ինչպիսիք են Հայաստանում ֆրանսիական համալսարանը, Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանը, Եվրոպական տարածաշրջանային ակադեմիան, Մոսկվայի պետական համալսարանի Երևանի մասնաճյուղը և այլն, ինչը խթանում է գիտակրթական ոլորտի զարգացմանը մեր երկրում՝ բազմազան համալսարանների միջև մրցակցության գործոնի միջոցով։

Ինչ վերաբերում է Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցին, ապա Մայր աթոռ Սուրբ Էջմիածնին պատկանող այս կառույցը հանրապետությունում հոգևոր (կրոնագիտական, աստվածաբանական) և հայագիտական ոլորտների գիտակրթական նշանավոր կառույցներից մեկն է և համայն հայության համար հոգևոր-եկեղեցական գործիչների պատրաստման դարբնոց[18]:

Գիտական հետազոտությունները կանոնավոր կերպով խրախուսող կառույցներից ամենանշանավորը հանրապետության նախագահի մրցանակն է: Այն «...շնորհվում է բնական և տեխնիկական գիտությունների և ինֆորմացիոն տեխնոլոգիաների, ֆիզիկայի, բժշկագիտության, արվեստի, գրականության, հումանիտար գիտությունների, մարդասիրական արժեքների տարածմանն ուղղված գործունեության և ծրագրերի բնագավառներում արժեքավոր գործեր և հայտնագործություններ կատարած հեղինակներին»[19]: «Հանրապետության նախագահի մրցանակ» հաստատությունը հիմնվել է 2000թ. «Ռոբերտ Բողոսյան և որդիներ» հիմնադրամի կողմից: Մրցանակաբաշխությունն անցկացվում է ամեն տարի՝ մրցութային հիմունքներով, և հաղթողները՝ Հայաստանի լավագույն գիտնականներն ու արվեստի գործիչները, իրենց

[18] Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Եր., «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2002, էջ 948-949:
[19] Հայկական Սփյուռք: Տարեգիրք, Եր., «Պոլիգրաֆ բիզնես», 2009, էջ 150:

աշխատանքների համար պարգևատրվում են $10 հազարին համարժեք դրամի չափով[20]:

Հաջորդ ինստիտուցիոնալ կառույցը, որը խրախուսում է հետազոտական և ստեղծագործական աշխատանքները Հայաստանում, Համաշխարհային հայկական կոնգրեսի և Ռուսաստանի հայերի միության կողմից անցկացվող ամենամյա մրցանակաբաշխությունն է՝ գիտության և մշակույթի ոլորտի լավագույն ստեղծագործությունների համար: Սույն մրցանակաբաշխությունը նույնպես անցկացվում է մրցութային հիմունքներով:

Գիտության ոլորտում անցկացվում է «Լավագույն գիտական աշխատանք» մրցույթը, որի արդյունքներով մրցանակի են արժանանում ինչպես հումանիտար (պատմություն, սոցիոլոգիա, իրավագիտություն, արվեստ, լեզու և գրականություն, տնտեսագիտություն, հայագիտություն, ազգագրություն), այնպես էլ բնագիտական (ֆիզիկա, մաթեմատիկա և մեխանիկա, ինֆորմատիկա, տեխնիկական գիտություններ, քիմիա, կենսաբանություն, երկրաբանություն) աշխատանքները: Հաղթողները ստանում են դրամական պարգև: Ի տարբերություն հանրապետության նախագահի մրցանակի՝ սույն մրցանակաբաշխությունը միտված է առավելապես խրախու-

[20] ՀՀ նախագահի պաշտոնական կայք,
http://www.president.am/hy/president-awards/,
Համահայկական հիմնադրամի կայք,
http://www.himnadram.org/index.php?id=24162&lang=2

սելու երիտասարդության շրջանում իրականացվող գիտական հետազոտությունները։ Ըստ մրցույթի կանոնների՝ հետազոտությունների հեղինակների տարիքը չպետք է գերազանցի 35-ը[21]։

Վերոհիշյալ կառույցների գործունեությունը ոչ միայն նյութապես աջակցում է հայաստանյան հետազոտողներին, այլև, մրցակցություն առաջացնելով նրանց միջև, աշխուժություն է հաղորդում այդ ոլորտին։

ՀՀ անկախությունից ի վեր Հայաստան-սփյուռք համագործակցության զարգացման գործում իրենց նշանակալի ներդրումն ունեն նաև համահայկական նշանակության հիմնադրամները, որոնք գործունեություն են ծավալում ինչպես Հայաստանի, այնպես էլ հայկական համայնքների կյանքում առկա գերակա հիմնախնդիրների լուծման ուղղությամբ։ Իրենց բարեգործական գործունեությամբ հատկապես աչքի են ընկնում ԱՄՆ հայկական հիմնադրամները՝ Հայ օգնության հիմնադրամը, Թուֆենկյան բարեգործական հիմնադրամը, «Գաֆեսճյան ընտանիք» հիմնադրամը, Լինսի հիմնադրամը, Ջինիշյան հիշատակի հիմնադրամը և այլն։ Հիմնադրամների բյուջեներն ու հետաքրքրությունների ոլորտները բազմազան են։ Դրանք խմբավորելու դեպքում կունենանք հետևյալ պատկերը.

[21] Տե՛ս, օրինակ, Համաշխարհային հայկական կոնգրեսը և Ռուսաստանի հայերի միությունը, ՀՀ Սփյուռքի նախարարության հետ համատեղ, հայտարարում են 2013թ. ստեղծագործական և գիտական աշխատանքի միջազգային մրցանակաբաշխություն, http://hayernaysor.am/

- Գիտակրթական ոլորտ (միջնակարգ/բարձրագույն կրթություն, բնագիտական և հումանիտար ոլորտներ)
- Արվեստ և մշակույթ
- Կրոն և եկեղեցի
- Համայնքային տնտեսական զարգացում
- Մարդասիրական ծառայություններ
- Առողջապահական ծրագրեր:

Հիմնադրամների մեծ մասում գիտակրթական խնդիրները մնում են առաջնային: Հետևաբար, դրանք անհատական և ինստիտուցիոնալ մակարդակներում աջակցում են Հայաստանի և սփյուռքի գիտավերլուծական հանրությանը, որն իրականացվում է մի քանի ձևերով:

Ագեան հիմնադրամն, օրինակ, իրականացնում է ամենամյա կրթաթոշակային ծրագիր Երևանի պետական համալսարանի, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի և Մխիթար Հերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարանի բակալավրիատում սովորող ուսանողների համար: Կրթաթոշակներ են տրամադրվում նաև տեղեկատվական տեխնոլոգիաների, ճարտարագիտության, մաթեմատիկայի, ֆիզիկայի և բժշկության ոլորտներում սովորող մագիստրանտներին[22]:

[22] 2012-2013 Akian Foundation Scholarship Programs at American University of Armenia, Armenia, http://scholarship-positions.com/2012-2013-akian-foundation-scholarship-programs-at-american-university-of-armenia-armenia/2012/06/12/

Կրթական ոլորտում նշանակալի գործունեություն է ծավալում Թավիթյան հիմնադրամը[23], որը չորս մասնագիտություններով ֆինանսավորում է ՀՀ պետական ծառայողների ուսումը (վերապատրաստումը, մասնագիտական կատարելագործումը) ԱՄՆ Թաֆթս համալսարանի Ֆլեթչերի Իրավունքի և դիվանագիտության դպրոցում: Առայսօր շուրջ 300 պետական ծառայող Հայաստանից ուսում է ստացել այդ դպրոցում:

Բերթա և Ջոն Կարապետյաններ բարեգործական հիմնադրամը *(The Bertha and John Garabedian Charitable Foundation)* երկար տարիներ դրամաշնորհներ է հատկացրել մշակույթի և արվեստի, կրոնի, հանրային քաղաքականության, բարձրագույն կրթության և այլ ոլորտներում: Այս հիմնադրամը հատկացնում է գումարներ Ֆրեզնոյի հայագիտական ուսումնասիրությունների ծրագրի իրականացման համար[24], որը նախատեսում է ինչպես ծրագրի գործունեության ապահովումը, այնպես էլ փորձառության կուտակման հնարավորություն ուսանողության համար: Հայագիտական կենտրոնների կանոնավոր գործունեության կամ հայագիտական հետազոտությունների համար մեծ գումարներ է հատկացրել նաև Մանուկյան Սիմոն հիմնադրամը (*Manoogian Simone Foundation*), ինչպես Հայաստանում, այնպես էլ ԱՄՆ-ում[25]:

[23] Հիմնադրամի հիմնադիր նախագահն է ամերիկահայ գործարար և բարերար Ասո Թավիթյանը:
[24] Bertha & John Garabedian Foundation Grant Renewed http://armenianstudies.csufresno.edu/hye_sharzhoom/vol21/may70/bertha.htm
[25] Manoogian Simone Foundation gives $1.2 million for Armenian studies, http://www.ur.umich.edu/0708/Nov19_07/24.shtml

«Նազարյան ընտանիք» հիմնադրամը (Nazarian Family Foundation) տարեկան մոտ 30 դրամաշնորհ է հատկացնում բարձրագույն կրթության և էթնիկ հետազոտությունների կատարման համար: Դրանցից օգտվում են ՀՀ և ԱՄՆ քաղաքացիները: Տարբեր ոլորտների համար նաև նվիրատվություններ է անում հայկական կազմակերպություններին:

Հիմնադրամների մեկենասությամբ տպագրվում են նաև հայագիտական և այլ ոլորտներում կատարված հիմնարար աշխատություններ: Օրինակ, Ժիրայր Նիշանյան հիմնադրամի (*Jerair Nishanian Foundation*) կողմից հովանավորվել է «Թուրքիայի Հանրապետության պատմություն» (հրտ. 2014թ.) աշխատությունը, որի համահեղինակներ են հանդիսանում մի շարք հայ գիտնականներ, «Թուրքական գրականության պատմություն» (հրտ. 2017թ.) դասագրքի հրատարակումը և այլն: 2004թ. Ժիրայր Նիշանյան հիմնադրամի միջոցներով հիմնանորոգվել է նաև Գավառի պետական համալսարանի Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի մասնաշենքը, հիմնադրամի կրթավճար ծրագրի շնորհիվ հարյուրավոր ուսանողներ տարբեր մասնագիտություններ են ստացել[26]:

Իսկ ահա հայ օգնության հիմնադրամի (ՀՕՖ) շրջանակներում 2000թ. ստեղծված Հայկական ազգային գիտակրթա-

[26] Գիտաժողով՝ նվիրված ԳՊՀ պատվավոր բարերար Ժիրայր Նիշանյանի ծննդյան 80-ամյա հոբելյանին, http://gsu.am/wp-content/uploads/2017/07/gsu_annual_conference_program_19.pdf

կան հիմնադրամը (*Armenian National Science and Education Fund-ANSEF*)՝ սկսած 2001թ., տարեկան շուրջ 25-ական դրամաշնորհ է տրամադրել Հայաստանում աշխատող գիտական խմբերին (2014-ին՝ 31, 2015-ին՝ 30, 2016-ին՝ 32)։ 2016թ. դրությամբ հիմնադրամը տրամադրել է շուրջ 420 դրամաշնորհ, որոնցից օգտվել է շուրջ 700 հայ գիտնական, այդ թվում՝ բազմաթիվ երիտասարդ գիտաշխատողներ։ Դրամաշնորհներն օգտագործվում են աշխատավարձերի, սարքավորումների ձեռքբերման, գործուղումների և գիտական գործունեությունն ապահովող այլ ծախսերի համար[27]։

Գրեթե բոլոր հիմնադրամներն այլ ուղղությունների կողքին իրականացնում են տարբեր մակարդակների գիտակրթական նշանակության ծրագրեր, հատկացումներ են արվում նաև հայկական համայնքային կազմակերպություններին։ Միևնույն ժամանակ, բացի հիմնադրամներից, առկա են նաև գիտության ոլորտում պետություն-սփյուռք գործակցության այլ դերակատարներ։

[27] 5000-ական դոլար տրվեց Հայաստանում աշխատող 32 գիտական խմբերին, «168 ժամ», 27.01.2016, http://168.am/2016/01/27/587677.html

Գիտական սփյուռք-պետություն հարաբերությունների գլխավոր դերակատարները

Գիտական սփյուռք-պետություն հարաբերություններում կարևոր դերակատարում ունեն նաև սփյուռքի գիտական ներուժի համախմբման, գիտահետազոտական աշխատանքների համակարգման, ֆինանսական աջակցության նպատակով ստեղծված սփյուռքյան գիտական կառույցները (*Scientific Diaspora Organizations*)։ Դրանք հասարակական հիմունքներով ստեղծված նեղ մասնագիտական և տարբեր գիտաճյուղերի ներկայացուցիչներին մեկ հարկի տակ համախմբող միություններ ու ցանցային կառույցներ են, որոնք գործում են երկու մակարդակում՝ տեղական (օրինակ՝ ԱՄՆ-ում բնակվողների համար) և գլոբալ (անկախ բնակության վայրից ընդգրկում են ողջ սփյուռքի գիտական ռեսուրսները)։ Չնայած մասնագիտական տարբեր կազմերի և միմյանցից տարբերվող ռազմավարական նպատակների առկայությանը՝ կարելի է մատնանշել այն հիմնական ուղղությունները, որոնց շուրջ կառուցվում է սփյուռքյան գիտական ցանցերի քաղաքականությունը.

- սփյուռքյան մտավոր ռեսուրսների համախմբում և ներգրավում ցանցային աշխատանքներում,
- գիտական սփյուռքի վերաբերյալ տեղեկատվական բազաների ստեղծում,
- գիտական միջոցառումների խթանում տարածաշրջանային մակարդակով,

- դրամաշնորհների որոնում և դրամահավաքային միջոցառումների անցկացում,
- նմանատիպ գործունեություն ծավալող կազմակերպությունների հետ համագործակցություն,
- հայրենիքի գործընկերների հետ կապերի վերականգնում և ընդլայնում,
- մասնագիտական կարողությունների ներդրում հայրենական գիտակրթական և այլ ոլորտների զարգացման գործում,
- ֆինանսական և այլ կարգի աջակցություն արտերկրում կրթություն ստացող հայրենակիցներին։

Այսպիսի կառույցների գործունեության առաջին փուլի նպատակն է եղել համախմբել գիտական համայնքի ներկայացուցիչներին մի կառույցում, որը հնարավորություն կընձեռեր ծանոթանալ տարբեր պատճառներով հայրենիքից դուրս գտնվող, գիտությամբ զբաղվող հայրենակիցների խնդիրներին և գիտական ձեռքբերումներին։ Ժամանակի ընթացքում զարգանալով և ձևավորվելով որպես ինստիտուցիոնալ կառույցներ՝ դրանք ընդլայնեցին իրենց գործունեության դաշտը։

Միջազգային փորձից հիշատակենք մի քանի կառույցներ, որոնք իրականացրել են համապետական նշանակության նախագծեր, օրինակ՝ *Brain Gain Network*-ի թիրախային խմբերը նախագծում են ինտեգրալ սխեմաներ, ֆիլիպինյան

պետական քաղաքականության շրջանակներում սեփական գիտելիքներով և փորձով մասնակցում են հայրենի երկրի տեխնոլոգիաների և այլընտրանքային էներգետիկայի ոլորտների կայացմանը: Կամ Գլոբալ կորեական ցանցը, որն իրականացնում է ցանցի անդամների հետաքրքրությունների տիրույթում գտնվող նեղ մասնագիտական հիմնախնդիրներին նվիրված համաժողովներ, համախմբում արտերկրում բնակվող կորեացի մասնագետներին և այլն:

Ինչ վերաբերում է հայկական սփյուռքին՝ արտերկրում գործում են հումանիտար, գիտատեխնիկական ոլորտում աշխատող հայազգի մասնագետներին համախմբող, գիտահետազոտական գործունեություն իրականացնող, հայաստանյան գիտական կազմակերպություններին և անհատ գիտնականներին աջակցող կազմակերպություններ: Որպես հայկական սփյուռքի գիտական ցանցային կառույց աչքի է ընկնում Ամերիկահայ Ճարտարագետների և գիտնականների ընկերակցությունը *(Armenian Engineers and Scientists of America-AESA)*, որը հիմնադրվել է 1983թ. Գլենդելում (Կալիֆորնիա): Ընկերակցությունը ԱՄՆ-ում մասնաճյուղեր ունի Նյու Յորքում, Նյու Ջերսիում և Միչիգանում: Հիմնականում կենտրոնացած է աշխարհասփյուռ հայազգի ճարտարագետների, գիտնականների, ձեռնարկատերերի, ճարտարապետների մասնագիտական, տեխնիկական և գիտական խնդիրների վրա:

Կազմակերպել է համաշխարհային հայկական գիտական երկու կոնգրես: Առաջին համաշխարհային կոնգրեսը կազմակերպվել էր Ֆրանսիայի «Արարատ» գիտությունների ակադեմիայի հետ, որը տեղի է ունեցել 1993թ., ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր վարչությունում՝ Փարիզում: *AESA*-ն կազմակերպել է նաև մի քանի սիմպոզիումներ, որոնց թվում՝ «Հայաստանի տնտեսական ռեստրուկտուրիզացիան» (1991թ., Լոս Անջելես): Այն ներգրավել է ավելի քան 200 մասնագետի ԱՄՆ-ից, Հայաստանից, Կանադայից, Մեծ Բրիտանիայից, Ֆրանսիայից և Ավստրալիայից: Նրանց թվում էր 16 հոգանոց պատվիրակությունը Հայաստանից, որի կազմում էին ակադեմիայի անդամներ և Հայաստանի նորաստեղծ կառավարության պաշտոնյաներ:

Կազմակերպությունը հովանավորել է տեխնիկական նախագծեր Հայաստանում և հայկական համայնքներում, կազմակերպել բազմաթիվ սեմինարներ և դասախոսություններ Հայաստանի էներգիայի, էկոլոգիայի, տրանսպորտի, տեղեկատվության մշակման խնդիրների վերաբերյալ[28], Հայաստանի հետ համատեղ իրականացրել է *CRD (Cosmic Ray Division)* և *Care for Sevan* ծրագրերը[29]:

[28] Armenian Engineers and Scientists of America 32nd Anniversary Celebration, http://asbarez.com/140454/armenian-engineers-and-scientists-of-america-32nd-anniversary-celebration/

[29] *Նահապետյան Հ., Վերանյան Կ., Միմավորյան Ա., Ղանալանյան Տ.,* Հայ համայնքն ԱՄՆ-ում, Երևան, 2010, էջ 28:

ԱՄՆ-ում գործող կառույցներից կարելի է հիշատակել նաև Հայաստանի համար վերլուծությունների և պլանավորման ինստիտուտը *(այսուհետ՝ ARPA)*: *ARPA*-ն ԱՄՆ-ում բնակվող հայազգի ճանաչված գիտնականներով համալրված եզակի կառույցներից է, որը Հայաստանի անկախության առաջին տարիներից համագործակցել է ՀՀ տարբեր նախարարությունների հետ, կատարել վերլուծություններ, հետազոտություններ, տրամադրել խորհրդատվություններ բազմաթիվ ոլորտների համար: 1992թ. ի վեր կառույցը կրթական, տնտեսական, էներգետիկ, տրանսպորտային համակարգերին, արտաքին քաղաքականությանը, Հայաստան-սփյուռք հարաբերություններին, առևտրի և արդյունաբերության ոլորտներին առնչվող հետազոտություններ և առաջարկություններ է ներկայացրել ՀՀ կառավարությանը[30]:

Համագործակցության հիմնական ձևերն արտահայտվում են ստորև բերված ուղղություններով.

1. *Դասընթացներ:* Տարբեր բնագավառների մասնագետների ներգրավմամբ կազմակերպում է Հայաստանին և սփյուռքին առնչվող ամենամսյա սեմինարներ՝ նվիրված հայապահպանությանը, սփյուռքում հայկական դպրոցների զարգացմանն ու հայագիտական տարբեր թեմաների, իրագործում է հեռակա ուսուցման ծրագրեր: Իրականացրել է ՀՀ և ԱՀ դպրոցներում «Առողջ ապրելակերպ և կյանքի ոճ» թեմայով դասընթացներ:

[30] ԱՐՓԱ ինստիտուտի կայք, http://www.arpainstitute.org/.

2. *Գիտական մրցույթ:* ԱՐՓԱ ինստիտուտի «Նորարարության մրցույթը» կազմակերպվում է համալսարանական մակարդակով և նպատակ ունի քաջալերել ուսանողներին, ասպիրանտներին և երիտասարդ գիտնականներին տարբեր բնագավառներում (օրինակ՝ ճարտարագիտություն, մաթեմատիկա, տեխնոլոգիա, բժշկագիտություն և այլն): Մրցույթը տեղի է ունենում ամեն տարի՝ սկսած 2006 թվականից: Հավելենք, որ այն հովանավորվում է նաև ՀՀ Սփյուռքի և ԿԳ նախարարությունների կողմից[31]:
3. *Բազմապրոֆիլ կառույցների հիմնում:* Երևանի «Էրեբունի» հիվանդանոցում հիմնադրել է արյան փոխներարկման, ՀՀ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի հետ համատեղ՝ Գենետիկայի ուսումնասիրությունների կենտրոններ, տրամադրել է նաև ժամանակակից սարքավորումներ: ԱՐՓԱ-ն ցանկանում է նաև հիմնել նանոտեխնոլոգիաների հետազոտության կենտրոն Հայաստանում, որին ֆինանսական աջակցություն են ցուցաբերելու սփյուռքյան կառույցներ և մի շարք անհատ բարեգործներ:
4. *Նյութատեխնիկական օժանդակություն:* ՀՀ բնապահպանության նախարարության նյութատեխնիկական բազայի համալրման նպատակով նվիրատվություններ ու շինարարական վերանորոգումներ է իրականացրել:

[31] ԱՐՓԱ Հիմնարկի նորարարության մրցույթ, http://arpainstitute.org/wp-content/uploads/2016/10/ARPA_Invention_Criteria_Arm_13.pdf

Ջրային ռեսուրսների կառավարման գործակալությանը տրամադրել է երկու հզոր համակարգիչ՝ *«ArcGIS»* ծրագրի գործածման համար, և այլ սարքավորումներ[32]:

ԱՄՆ-ում մեծ թիվ են կազմում բժշկության ոլորտի մասնագետներին միավորող կառույցները, ինչպիսիք են Հայ-ամերիկյան բժշկական միությունը (*Armenian American Medical Society*), Հայկական բժշկագիտական համայնքը (*Armenian medical scientific community-AMSC*), Առողջապահության բնագավառի ամերիկահայ արհեստավարժների կազմակերպությունը: Դրանով պայմանավորված՝ ԱՄՆ հայ համայնքի գիտական (մասնագիտական) ներուժի նպաստը Հայաստանին նկատելի է նաև առողջապահության ոլորտում: Այն դրսևորվում է ամերիկաբնակ հայ բժիշկների այցելությամբ Հայաստան և տեղի գործընկերների հետ փորձի փոխանակմամբ, Հայաստանում բժշկական հաստատությունների հիմնմամբ, ԱՄՆ-ում կամ Հայաստանում հայ բժիշկների վերապատրաստման կազմակերպմամբ և այլ ձևերով[33]:

Առողջապահական ոլորտի կազմակերպություններից հիշատակելի է հատկապես Հայկական աչքի պահպանման նախագիծը (*Armenian EyeCare Project*)[34], որի նպատակն է

[32] Ամերիկահայ ճարտարագետների և գիտնականների ընկերակցությունը նյութատեխնիկական աջակցություն է տրամադրել ՀՀ բնապահպանության նախարարությանը, https://www.aysor.am/am/news/2017/01/19/աջակցություն/1197692

[33] *Հովյան Վ.,* ԱՄՆ հայ համայնքի գիտական ներուժի շուրջ, «Գլոբուս», թիվ 7 (86), 2017, էջ 40:

[34] Հայտնի է նաև «Լույս հայի աչքերին» *(«Bringing Sight to Armenian Eyes)»* անվամբ:

անվճար բժշկական սպասարկում իրականացնել տեսողական խնդիրներ ունեցող հայաստանցիների համար: Նախագիծը շրջիկ հիվանդանոցի միջոցով, որը զինված է ակնաբուժական արդիական սարքավորումներով, Հայաստանի մարզերում բժշկական օգնություն է ցուցաբերել հազարավոր սոցիալապես անապահով մարդկանց[35]: Ստեղծված լինելով 1992թ.՝ նախագիծն իր գործունեության 25 տարիների ընթացքում հսկայական դեր է խաղացել սոցիալապես անապահով խավին պատկանող հայաստանցիների տեսողական խնդիրների լուծման, մասնավորապես՝ մանկական կուրության կանխարգելման գործում:

Բացի տեսողական խնդիրներ ունեցող հայերին աջակցելուց, նախագիծը նպաստել է նաև ակնաբուժության ոլորտի զարգացմանը Հայաստանում՝ հովանավորելով հայաստանցի ակնաբույժների վերապատրաստումը ԱՄՆ առաջնակարգ կլինիկաներում[36] և աջակցելով Հայաստանի մարզերում ակնաբուժական կլինիկաների զարգացմանը: Նախագիծն իր առջև խնդիր է դրել Հայաստանի 5 մարզերում՝ Տավուշում (Իջևան), Լոռիում (Սպիտակ), Շիրակում (Գյումրի), Վայոց ձորում (Եղեգնաձոր) և Սյունիքում (Կապան), որտեղ առավել մեծ չափով կա դրա կարիքը, բացել ակնաբուժական կլինիկաներ, որոնք հագեցած կլինեն ոլորտի նորագույն տեխնոլո-

[35] Տե՛ս Mobile Eye Hospital: What weighs 14 tons and restores eyesight?, https://eyecareproject.com/video/mobile-eye-hospital/

[36] Armenian EyeCare Project Kicks Off 25th Anniversary, http://en.hayernaysor.am/english-armenian-eyecare-project-kicks-off-25th-anniversary/

գիաներով, ինչպես նաև հեռահաղորդակցային սարքավորումներով, որոնք թույլ կտան մարզային ակնաբույժներին անհրաժեշտության դեպքում կապվել երևանյան կլինիկաների հետ և խորհրդատվություն ստանալ մայրաքաղաքի իրենց գործընկերներից: Իջևանի և Սպիտակի կլինիկաներն արդեն բացվել են համապատասխանաբար 2015թ. և 2016թ.[37]: 2017թ. բացվել է Կապանի կլինիկան:

Հատկապես հիշատակելի է Մանկական կուրության կանխարգելման գերազանցության կենտրոնի հիմնումը Երևանում 2012թ., ինչը հեղափոխական նշանակություն ունեցավ այս ոլորտի զարգացման համար: Կենտրոնի ստեղծումն ունեցավ ոչ միայն առողջապահական, այլև որոշակի տնտեսական նշանակություն Հայաստանի համար՝ վերջինս վերածելով մանկական ակնաբուժության միջազգային կենտրոնի, քանի որ դրանից հետո ոչ միայն հայ ծնողները ստիպված չեն իրենց երեխաներին տանել արտասահման՝ բուժման, այլև արտասահմանյան երկրներից են այդ նպատակով գալիս Հայաստան[38]:

Բացի *Armenian EyeCare Project*-ից, կան նաև այլ կազմակերպություններ, որոնք Հայաստանի տարբեր շրջաններում բժշկական օգնություն են ցուցաբերում բնակչությանը: Այդպիսի օգնություն ցուցաբերվում է Գլենդելի ադվենթիստական

[37] Տե՛ս Regional Eye Clinics: Five Clinics for $5 Million, https://eyecareproject.com/video/5-million-for-5-aecp-regional-clinics/

[38] Տե՛ս Center of Excellence for the Prevention of Childhood Blindness: Saving Thousands of Babies from Blindness, https://eyecareproject.com/video/center-of-excellence-i/

բժշկական կենտրոնի (*Glendale Adventist Medical Center*) և «Հայաստան» համահայկական հիմնադրամի ԱՄՆ Արևմտյան տարածաշրջանի գրասենյակի համագործակցությամբ: 2016թ. հոկտեմբերի 13-20-ը բազմապրոֆիլ օգնություն է ցուցաբերվել սահմանային Նոյեմբերյանի շրջանի բնակչությանը[39]:

Այս տեսանկյունից հետ չեն մնում նաև այլ երկրներում բնակվող հայ բժիշկները, որոնց ջանքերով ստեղծվել են ինստիտուցիոնալ կառույցներ, ինչպես, օրինակ՝ Մոսկվայի հայ բժիշկների և կամավորների միությունն ու ՌՀՄ բժիշկների ասոցիացիան[40], Գերմանիայի հայ բժիշկների միությունը, Ֆրանսահայ բժշկական միությունը[41], Մեծ Բրիտանիայի հայ բժիշկների ասոցիացիան, Օնտարիոյի հայ բժշկական միությունը: Տվյալ հաստատություններն իրականացրել են հանրային առողջապահական ծրագրեր, ՀՀ առողջապահական համակարգում աշխատող բուժանձնակազմի մասնագիտական վերապատրաստման ծրագրեր արտերկրում և Հայաստանում, տրամադրել բժշկական սարքավորումներ և այլն: Լայն իմաստով նրանց գործունեությունն ուղղված է ՀՀ բժշկական և սոցիալական ենթակառուցվածքների կատարելագործմանը:

[39] Տե՛ս Armenia Fund, Glendale Adventist Conclude Successful 2nd Mission to Armenia, http://en.hayernaysor.am/english-armenia-fund-glendale-adventist-conclude-successful-2nd-mission-to-...

[40] Первая Всероссийская конференция Ассоциации врачей Союза армян России, http://sarinfo.org/msg/13-10-14.shtml.

[41] Activités de l'UMAF en Arménie, http://www.umaf.fr/index.php?category/Presentation-umaf/Activites-umaf-en-armenie.

Ինչպես ԱՄՆ-ում, սփյուռքի հայաշատ այլ համայնքներում ևս ստեղծվել են տարբեր բնագավառների մասնագետների միություններ (ցանցեր, ընկերակցություններ)։ Եվրոպայում հայկական գիտական հանրույթները համախմբող կառույցներից աչքի է ընկնում Փարիզում 1986թ. հիմնադրված «Արարատ» գիտությունների միջազգային ակադեմիան, որը համախմբում է հայ գիտնականների Հայաստանից, Եվրոպայից, Միջին Արևելքից, Ամերիկայից։ Ակադեմիայի նպատակն է հայրենիք-սփյուռք կապերի սերտացումը, Հայաստանի գիտական և մշակութային հաստատություններին օժանդակելը[42]։

Մեկ այլ կառույց՝ Բոխումում 2001թ. հիմնադրված Հայ ակադեմիականների միություն-1860-ը, ձգտում է միավորել գաղութահայ կյանքից կտրված նախկին հայաստանաբնակներին, նպաստել Գերմանիայի և Հայաստանի գիտակրթական հաստատությունների միջև համագործակցության զարգացմանը[43]։ Այս շարքին կարելի է ավելացնել նաև Ֆրանսիայում գիտության, մշակույթի և այլ բնագավառների հայազգի մասնագետներին միավորող Միջմասնագիտական հայկական միությունը (*Le groupement Interprofessionnel Arménien,* հիմն. 1981թ.), որն իրականացնում է տարատեսակ

[42] Association Internationale, http://www.ararat-academy.org/association.html.

[43] *Ղանալանյան Տ.,* Հումանիտար ոլորտի գիտավերլուծական հանրությունը սփյուռքահայ համայնքներում. պատկերի ուրվագիծ, «Գլոբուս» վերլուծական հանդես, թիվ 11, 2013, էջ 37։

միջոցառումներ՝ Հայաստան-սփյուռք կապերի զարգացման նպատակով[44]:

ՀՀ էներգետիկ ռեսուրսների զարգացման նպատակով որոշակի քայլեր է ձեռնարկել նաև 1993թ. Ֆրանսիայում հիմնադրված Էներգիա Հայաստանի համար (*Enérgie pour l'Arménie*) հայկական կազմակերպությունը: Խոսքը երկու նախագծերի՝ նոր հէկերի կառուցման և գործող էլեկտրակայանների արդիականացման մասին է: Ֆինանսական սղության պատճառով առաջին նախագիծը չի իրագործվել: Ինչ վերաբերում է երկրորդին, ապա կազմակերպությունը ֆինանսական միջոցներ է տրամադրել պահեստամասերի և սարքավորումների գնման համար, որի արդյունքում ՀՀ-ում վերականգնվել է ինը մինի հէկ[45]:

Սփյուռքի հայ մասնագետներին միավորող կառույցների թարմ օրինակ է Սփյուռքահայ գիտնականների ասոցիացիան (*Armenian Scientific Diaspora Association-ASDA*), որը ստեղծվել է Համահայկական գիտական առաջին համաժողովի քննարկումների արդյունքում:

Ասոցիացիայի առաքելությունը հետևյալն է. հայկական գիտական սփյուռքի անդամների ջանքերն ուղղված են լինելու Հայաստանում՝ հետազոտական փորձաքննությանը,

[44] Groupement Interprofessionnel International Arménien, https://www.ffa-int.org/wp-content/uploads/17-28-2.pdf.

[45] *Кртян Л.,* Особенности институциональной структуры армянской диаспоры Франции, Международные отношения. Политология. Регионоведение, Вестник Нижегородского университета им. Н.И. Лобачевского, 2010, № 6, с. 303.

մասնագետների վերապատրաստմանը, տրամադրելու է ռեսուրսներ կրթության և հետազոտության առաջխաղացման համար՝ դասընթացների և գիտաժողովների կազմակերպման միջոցով: Միության տեսլականը ենթադրում է, որ այն կատարելու է նաև այլ գործառույթներ, մասնավորապես ծառայելու է որպես խորհրդատվական մարմին պետական կազմակերպությունների համար, որոնք Հայաստանում անմիջականորեն ներգրավված են գիտության զարգացման ծրագրային և ֆինանսական աջակցության ցուցաբերման գործում: Միևնույն ժամանակ, խրախուսելու է երիտասարդ գիտնականների և դասախոսների շրջանում վերապատրաստման դասընթացների անցկացումն արտերկրի բարձրագույն կրթական հաստատություններում:

Ըստ էության, հայաստանյան և աշխարհասփյուռ հայ գիտնականների համագործակցության համար այն ևս կարևոր կազմակերպություն է, որը կարող է ծառայել որպես կամուրջ թե՛ Հայաստան-սփյուռք հարաբերություններում, թե՛ միջազգային գիտական հանրության միջև: Կարևոր հանգամանք է նաև այն, որ միության ղեկավար կազմում ներկայացված են տարբեր երկրների և տարբեր բնագավառների մասնագետներ՝ ՌԴ-ից Ա.Օգանովը (ասոցիացիայի փոխնախագահ, Սկոլկովոյի գիտության և տեխնոլոգիայի ինստիտուտ), Յ.Օգանեսյանը, ԱՄՆ-ից Դ.Ղուկասյանը (ասոցիացիայի փոխնախագահ, Թեմպլիի համալսարանի Բժշկագիտության ինստիտուտ), Գերմանիայից Ա.Մուլկիդջանյանը և

այլք, ինչպես նաև ՀՀ ակադեմիական և բուհական համակարգերի գիտաշխատողներ, որոնք մտնում են միության հայաստանյան աշխատանքային խմբի մեջ[46]:

Չնայած կազմակերպությունների գործունեության դաշտը բավական լայն է, և հնարավոր չէ անդրադառնալ բոլոր ուղղվածություններով կատարված աշխատանքներին, ընթացիկ և ապագայում նախատեսված ծրագրերին, ակնհայտ է, որ վերոհիշյալ հաստատությունները տարատեսակ միջոցառումների անցկացմամբ շարունակում են արտերկրում հիմնադրված տարբեր կառույցների հովանու ներքո կոնսոլիդացնել սփյուռքի մասնագետներին, բազմապիսի նախագծերով հիշատակված ոլորտներում անհատական և ինստիտուցիոնալ մակարդակներով զարգացնել Հայաստան-սփյուռք համագործակցությունը:

Որպես հարաբերությունների զարգացման և խորացման մեկնակետ՝ սփյուռքի մասնագիտական հանրույթների հետ տարվելիք աշխատանքները կանոնակարգելու նպատակով տարբեր երկրներում ընդունվել են իրավական ակտեր, համագործակցությանը միտված հայեցակարգեր: Անկախ նրանից, թե որոշումներում ամրագրված գաղափարներն ինչ մեխանիզմներով են կյանքի կոչվում, ինչ խոչընդոտների են բախվում, ինչ արդյունքներ են արձանագրվում, իսկ դրանք տարբեր երկրների սփյուռքյան առանձնահատկություններով

[46] Մանրամասն տե՛ս Սփյուռքահայ գիտնականների ասոցիացիայի կայք, http://test.asdaworld.com/

պայմանավորված՝ նույնը չեն, ակնհայտ է, որ նման փոխգործակցությունը բարձրացվել է պետական քաղաքականության մակարդակի։

Այս պարագայում համագործակցության դերակատարներն են սփյուռքի գործերով նախարարություններն ու գործակալությունները, կրթության, գիտության, տնտեսության, որոշ դեպքերում՝ ռազմարդյունաբերության և այլ ոլորտների զարգացման գործի պատասխանատու մարմինները։ Փոխգործակցության զարգացման նպատակներից ելնելով՝ գերատեսչական կառույցներն աջակցում են սփյուռքում առկա գիտական կառույցներին նյութական և կազմակերպչական տեսանկյունից, նպաստում սփյուռքում մասնագիտական հանձնախմբերի ձևավորմանը և ցանցային կառույցների ստեղծմանը, մշակում և իրագործում են հայրենադարձությանն ուղղված համապետական նախագծեր բարձր որակավորում ունեցող մասնագետների շրջանում, կազմակերպում հեռավար համախմբում տեղեկատվական ցանցերի միջոցով և գիտական համագործակցության այլ եղանակներով։

Ինչպես սփյուռք ունեցող այլ պետությունների պարագայում, մեզ մոտ ևս ՀՀ պետական կառավարման մարմիններն այս ուղղությամբ գործադրել են համապատասխան ջանքեր, որոնցից արժե հիշատակել ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված երկու նորմատիվ ակտերը.

1. *Հայ գիտնականների ներուժի համախմբման ծրագիրը,* որը հաստատվել է 2009թ. ՀՀ կառավարության որոշու-

մով, իրականացվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի և ՀՀ ԳԱԱ-ի կողմից՝ ՀՀ Սփյուռքի և Էկոնոմիկայի նախարարությունների հետ համագործակցությամբ: Ծրագիրը նախատեսում էր իրականացնել մի շարք միջոցառումներ.

- ՀՀ և օտարերկրյա պետությունների հայ գիտնականների գիտական տեղեկատվական միասնական, համալրող էլեկտրոնային բազայի ստեղծում,
- գիտաժողովների, գիտական համատեղ քննարկումների կազմակերպում,
- օտարերկրյա պետությունների հայ գիտնականների հետ համաֆինանսավորման սկզբունքով գիտական ծրագրերի իրականացում, սփյուռքի հայ գիտնականների աջակցությամբ և մասնակցությամբ գիտության ոլորտում ժամանակակից մենեջերների պատրաստում,
- ինովացիոն նախագծերի մշակման և իրականացման, տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ներմուծման և ներդրման գործընթացներում օտարերկրյա պետությունների հայ գիտնականների փորձի օգտագործում և այլն[47]:

2. *Հայկական սփյուռքի՝ գիտական, կրթական, տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում առկա ներուժի*

[47] Ծրագիր հայ գիտնականների ներուժի համախմբման, https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2009/04/09_0459.pdf

հաշվառման մեխանիզմների ու տվյալների միասնական համակարգի ստեղծման (հաստատվել է 2010թ. ՀՀ կառավարության որոշմամբ) ծրագրում որպես միջոցառումների կատարողներ Հայաստանի Հանրապետության Սփյուռքի, Էկոնոմիկայի, Կրթության և գիտության նախարարություններից բացի, ներգրավված էին ճյուղային այլ գերատեսչություններ՝ Արտաքին գործերի, Առողջապահության, Սպորտի և երիտասարդության հարցերի, Մշակույթի նախարարությունները, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ-ն: Ծրագրով նախատեսված միջոցառումներից (ութ միջոցառում) մի քանիսը կատարողական տեսանկյունից կրում էին կարճաժամկետ, մյուսները՝ պարբերական և շարունակական բնույթ: Նշենք դրանցից մի քանիսը.

- սփյուռքի համահայկական և տարածաշրջանային կառույցների, անհատների և տեղեկատվական ռեսուրսների մասին լիարժեք տեղեկությունների ու տվյալների հավաքում, համապարփակ էլեկտրոնային շտեմարանի ստեղծում,
- սփյուռքի ներուժի հայտնաբերման, համախմբման նպատակով մասնագիտական համահայկական ընկերակցությունների ու ցանցերի ստեղծում,
- լրագրողների համահայկական համաժողովի կազմակերպում և մասնագիտական ընկերակցության ստեղծմանն աջակցություն,

- Հայաստանի Հանրապետության կողմից ձեռնարկվող պետական և հասարակական նախաձեռնությունների, համապետական և համահայկական նշանակություն ունեցող հարցերի վերաբերյալ քննարկումներին, միջոցառումներին և ծրագրերին սփյուռքի կրթամշակութային գործիչների, գիտնականների, մասնագետների հրավիրում,
- ՀՀ կառավարության ծրագրերի կատարմանը հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, կրթական, գիտական, մարզական և մշակութային բնագավառների հայտնի սփյուռքահայ գործիչների ներգրավում և այլ միջոցառումներ[48]:

Անդրադառնանք միջոցառումներից մի քանիսին (համաժողովներ, խորհրդաժողովներ, ծրագրեր և այլն), որոնք խթանում են հայրենիք-սփյուռք կապերի և փոխգործակցության հաստատմանը:

Այս պահի դրությամբ կարող ենք արձանագրել, որ պետություն-սփյուռք համագործակցության շրջանակներում տարբեր մասնագիտությունների գծով (բժշկություն, ճարտարապետություն, իրավաբանություն, քաղաքագիտություն և միջազգայնագիտություն, հայագիտություն, տնտեսագիտություն և այլն) կազմակերպվել են մի քանի համահայկական

[48] Հայաստանի Հանրապետության կառավարության նիստի արձանագրությունից քաղվածք, http://www.irtek.am/views/act.aspx?aid=56084

համաժողովներ, որոնք իրականացվել են ՀՀ Սփյուռքի նախարարության ջանքերով՝ այլ կառույցների հետ համատեղ, որտեղ տարբեր թեմատիկ ուղղություններով քննարկվել են համագործակցության հնարավոր ուղիներից մինչև նեղ մասնագիտական հարցեր։

Սփյուռքի համար իրականացվող ծրագրերի շարքում կարելի է մատնանշել նաև 2004 թվականից ի վեր ՀՀ ԿԳՆ-ի կողմից անցկացվող Համահայկական կրթական խորհրդաժողովները՝ նվիրված հայ համայնքների կրթօջախներին, դասավանդող ուսուցիչների վերապատրաստմանն ու օրակարգային այլ հարցերի։

Սփյուռքի և հայաստանյան գիտնականների մասնակցությամբ երկու տարի անընդմեջ՝ 2016-2017թթ., կազմակերպվել են նաև *համահայկական գիտական համաժողովներ*, որտեղ քննարկվել են մի շարք հիմնախնդիրներ, օրինակ՝ գիտության քարոզչության և դրա թերֆինանսավորման, գիտության ֆինանսավորման գործում մասնավոր ձեռնարկությունների ներգրավման, սփյուռքի մասնագետներին մեկ հարկի տակ միավորող կառույցի ստեղծման և այլ հարցեր։ Մասնավորապես, այս համաժողովների արդյունքում է ստեղծվել *Սփյուռքահայ գիտնականների ասոցիացիան* (*ASDA*)։ Համաժողովները կազմակերպվել են ՀՀ նախագահի բարձր հովանու ներքո, Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի շրջանակներում, Երիտասարդ կենսա-

բանների ասոցիացիայի և այլ հաստատությունների հետ համատեղ[49]:

Հայաստան-սփյուռք գործակցության հեռանկարներին և հիմնախնդիրներին նվիրված միջոցառումներից իրենց ուրույն տեղն ունեն *Հայաստան-սփյուռք համաժողովները*: Հընթացս բազմակողմանի հարցերի, համաժողովներում քննարկման առարկա են դարձել նաև սփյուռքի մասնագետների հետ Հայաստանի հնարավոր համագործակցության ուղիները, կիրարկման մեխանիզմները, ընդհուպ մինչև նրանց հնարավոր ներգրավումը բուհական-ակադեմիական և սոցիալ-տնտեսական նշանակության ոլորտներում: Հարկ է նկատել, որ *Հայաստան-սփյուռք 6-րդ համաժողովի* թեմատիկ նիստերից մեկը նվիրված էր այդ հարցերին, որտեղ, կարևորելով սփյուռքի գիտական և տեխնոլոգիական ներուժի առկայությունը, բանախոսների կողմից առաջարկվեց օգտագործել այն ՀՀ ռազմարդյունաբերության և գիտատեխնիկական համալիրի զարգացման մեջ: Քննարկվել են նաև Հայաստանում բարձրակարգ հետազոտական ծրագրերի իրականացման հնարավորությունները[50]:

Սփյուռքի համար նախատեսված միջոցառումներից կարելի է նշել ՀՀ Սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ կազմակերպված «Հայաստան. ստեղծենք միասին»

[49] Մեկնարկեց Երկրորդ համահայկական գիտական համաժողովը, http://www.erit.am/news/hy/79002 և Համահայկական գիտական համաժողով, http://yba.am/hy/համահայկական-գիտական-համաժողով/

[50] Տե՛ս Հայաստան-սփյուռք վեցերորդ համաժողովի ծրագիր, Երևան, 2017, էջ 19-20:

առաջին երիտասարդական հավաքը (2016թ.), որին աջակցել են ՀԲԸՄ-ն, «Լույս» և «Այբ» հիմնադրամները: Հավաքի նպատակն է եղել համախմբել Հայաստանի և սփյուռքի երիտասարդ գիտնականներին՝ նրանց միջև գործնական հարաբերությունների հաստատման և դրանցից ածանցված տարաբնույթ հարցերի շուրջ: Եվս մեկ կարևոր միջոցառում է «Սփյուռք» ամառային դպրոց ծրագիրը, որն իրագործում է ՀՀ Սփյուռքի նախարարությունը՝ Երևանի պետական համալսարանի հետ համատեղ[51]:

2018թ. Սփյուռքի նախարարությունը՝ *FAST* և *IDEA* հիմնադրամների, Դիլիջանի միջազգային դպրոցի և *Impact Hub Yerevan*-ի հետ համատեղ անց է կացնում *«Ներուժ»* ծրագիրը: Դրան կարող են մասնակցել բիզնես գաղափարներ ունեցող սփյուռքի 18-35 տարեկան երիտասարդները: Թիրախային ոլորտներն են գյուղատնտեսությունը, զբոսաշրջությունը և նորարարական տեխնոլոգիաները[52]:

Սփյուռքի մասնագիտական հանրության համախմբման, համագործակցության մեխանիզմների մշակման և լուծումներ փնտրելու նպատակով կարևորվել է նաև Սփյուռքի գիտնականների և համահայկական կառույցների

[51] Այն իրականացվում է սփյուռքի հայ համայնքներում ազգային ինքնության պահպանման ու զորացման, երիտասարդների շրջանում հայոց լեզվի իմացության մակարդակի բարձրացման, լրագրողների վերապատրաստման, համայնքների ինքնակազմակերպման և այլ խնդիրներին աջակցելու նպատակով, մանրամասն տե՛ս http://www.dss.am/am/About-us-About-program:

[52] Մանրամասն տե՛ս http://neruzh.am/

վերաբերյալ *տեղեկատվական բազայի ստեղծման* հարցը: Այս տեսանկյունից կարելի է նշել ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի կողմից ստեղծված օտարերկրյա պետությունների հայազգի գիտնականների ցուցակը, որտեղ ըստ գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառների ներկայացված են սփյուռքի շուրջ 750 հայազգի մասնագետներ[53]: Նշենք նաև սփյուռքի գիտավերլուծական հանրության խնդիրներին նվիված հետազոտության շրջանակներում հավաքված բազան, որտեղ աշխարհագրական սփռվածության և այլ դիտանկյուններից դասակարգված է հումանիտար ոլորտի գրեթե բոլոր ճյուղերը ներկայացնող, գիտավերլուծական աշխատանք կատարող ավելի քան 500 հայ մասնագետ[54]: Այս թվերը չեն հավակնում ամբողջական լինել, քանի որ անհատական տեսանկյունից դժվար է քանակական հստակ գնահատականներ տալ նրանց վերաբերյալ, այն պատճառով, որ գիտական սփյուռքի կազմն անընդհատ փոփոխության է ենթարկվում թե՛ որակապես, թե՛ մասշտաբներով, հետևաբար պետք է իրականացնել մշտադիտարկում:

Երկու տեղեկատվական շտեմարաններն էլ նկատի ունենալով՝ փաստենք, որ հայ գիտնականների մեծ մասը

[53] Օտարերկրյա պետությունների հայազգի գիտնականների ցուցակ՝ ըստ գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառների, http://scs.am/files/otarerkrya_hay_gitnakanner.pdf

[54] *Հարությունյան Գ., Միմավորյան Ա., Հովյան Վ., Ղանալանյան Տ.,* Սփյուռքի գիտավերլուծական հանրությունը, կազմակերպչական խնդիրներ և համագործակցության հեռանկարներ, Երևան, 2013:

գործում է երկու առանցքային երկրում՝ Ռուսաստանում և ԱՄՆ-ում, մնացածը՝ այլ երկրներում: Ինչ վերաբերում է մասնագիտություններին, ապա հումանիտար ոլորտում գիտավերլուծական աշխատանքով զբաղվող սփյուռքահայերի ամենամեծ խումբը կազմում են պատմաբանները, տնտեսագետները, քաղաքագետները, իրավաբանները և այլն, որոնք առաջատար համալսարանների, ուղեղային կենտրոնների և գիտաուսումնական հաստատությունների աշխատակիցներ են: Բնագիտության ոլորտում սփյուռքի գիտական հանրույթը ներկայացված է տարբեր մասնագիտություններով՝ ֆիզմաթ գիտություններ, քիմիա, ճարտարագիտություն, բժշկություն և այլն: Սույն ոլորտի ներկայացուցիչներն իրականացնում են տեսական ու պրակտիկ գործունեություն գիտատեխնիկական նշանակության լաբորատորիաներում և գիտահետազոտական ինստիտուտներում (ռոբոտաշինություն, քիմիական և բժշկական տեխնոլոգիաներ, նանոտեխնոլոգիաներ, էլեկտրատեխնիկայի, ռազմարդյունաբերության և այլ ոլորտներ): Կան նաև գիտական հաստատությունների վարչական և այլ օղակների ղեկավարներ:

Ըստ էության, վերոգրյալ ձևերը կամ հարաբերությունների զարգացմանը միտված քայլերը չեն արտացոլում տարբեր մակարդակներում (մակրո և միկրո) առկա համագործակցության ողջ սպեկտրը: Այնուամենայնիվ, նշենք, որ գերատեսչական կառույցներից բացի, սփյուռքահայ մասնագետների հետ տարբեր ձևաչափերով համակարգված փոխ-

գործակցության ավանդական փորձ ունեն ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիան, ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունները, Մատենադարանը, գիտավերլուծական կազմակերպությունները և այլն: Առանձին դեպքերում նման հարաբերություններ դրսևորվում են նաև մասնավոր սեկտորի հետ: Ինչ վերաբերում է համագործակցության արդյունավետությանը, ապա դա պետք է գնահատվի համապատասխան կառույցների կողմից:

Ինչպես տեսնում ենք, անհատական և ինստիտուցիոնալ մակարդակով երկուստեք առկա են ինքնակազմակերպման փորձեր և համագործակցության դեպքեր, սակայն գիտական սփյուռք-պետություն փոխգործակցության դաշտում գոյություն ունեն հիմնախնդիրներ, որոնք մասամբ բնորոշ են այլ սփյուռքերին ևս: Քանի որ «ուղեղների հետադարձ հոսքը» կամ զանգվածային հայրենադարձությունը կարող է աշխատել միայն այն ժամանակ, երբ երկիրը, տնտեսապես զարգանալով, ֆինանսական ներդրումներ է կատարում գիտության և տեխնոլոգիաների ոլորտում[55], ապա այս պահի դրությամբ հայկական սփյուռքի ինտելեկտուալ ներուժի ինտեգրման միջոցներից կարող են աշխատել հեռավար համախմբումն ու

[55] Այդպիսին էր Թայվանը 1990-ականների սկզբին, երբ երկրի զարգացմանը զուգահեռ հազարավոր մասնագետներ, վերադառնալով, աշխատանքի տեղավորվեցին համակարգչային տեխնոլոգիաների, միկրոէլեկտրոնիկայի ոլորտներում, մասնակցեցին բնագիտությանն առնչվող հետազոտական նախագծերում: Նույնն էր Հարավային Կորեայի, Հոնկոնգի, Սինգապուրի պարագաներում: Մանրամասն տե՛ս *Егерев С.,* Диалоги с диаспорой, Отечественные записки, N 7(8), 2002, с. 273-285.

համագործակցության այլ ձևերը: Հաշվի առնելով մեր իրողությունները, նաև միջազգային փորձը՝ մասնակիորեն կարելի է խմբավորել համագործակցության հնարավոր ձևերը և դրանց խանգարող հիմնական հանգամանքները:

Համագործակցության խթանման նպատակով արժե իրականացնել հետևյալ քայլերը.

1. Ստեղծել համացանցային պորտալներ՝ ըստ մասնագիտական ուղղվածությունների, որտեղ ներկայացված կլինեն տեղեկատվություն անհատների վերաբերյալ, գիտական հոդվածներ, հետազոտություններ, կոնտակտային տվյալներ, գիտության ոլորտում ունեցած ձեռքբերումներ և այլն: Դրա միջոցով կարող են իրականացվել առցանց դասախոսություններ սփյուռքի տարբեր համայնքներից և Հայաստանից, անցկացվել մասնագիտական խորհրդատվություններ տարբեր հարցերի շուրջ: Հարկ է նշել, որ աշխարհի հայ գիտնականների համար 2007թ. ձևավորվել էր առանձին կայք, որտեղ գրանցվելով՝ հայազգի գիտնականները պետք է ներկայացնեին իրենց գիտական կարողությունները և այլն: Սակայն *Armenian Science Portal*-ը գործել է միայն երկու շաբաթ և փակվել տեխնիկական պատճառներով[56]:

[56] *Նահապետյան Հ., Վերանյան Կ., Սիմավորյան Ա., Ղանալանյան Տ.,* Հայ համայնքն ԱՄՆ-ում, Երևան, 2010, էջ 12-15:

2. Ընդարձակել հայ մասնագետներին միավորող, ինստիտուցիոնալացված կառույցների աշխարհագրական սահմանները՝ մասնաճյուղերի բացման միջոցով, որը հնարավորություններ կստեղծի նոր անդամների ներգրավման համար: Ընդ որում, նման ցանցերն իրենց կազմում կարող են ընդգրկել ոչ միայն գիտության ներկայացուցիչներին, այլև գործարարներին, որոնք շահագրգռված են գիտության ֆինանսավորմամբ, գիտական արդյունքների առևտրայնացմամբ, ՀՀ գիտատեխնոլոգիական բնագավառներում ֆինանսական ներդրումներով և այլն:

3. 2013թ. մեր կատարած ուսումնասիրությունը ցույց տվեց, որ աշխարհի տարբեր երկրներում հայ մտավորականության ներկայացուցիչներն ընդգրկված են նաև վերլուծական կառույցների՝ այսպես կոչված «ուղեղային կենտրոնների» գործունեության մեջ, որոնք գործնական քաղաքականության վրա ունեն անմիջական ազդեցություն[57]: Սփյուռքի գիտափորձագիտական հանրության ներուժը հասարակական-քաղաքական թեմատիկայի բոլոր բնագավառներում էլ օգտակար է Հայաստանի համար: Այնուամենայնիվ, այդպիսիների շարքում կարելի է առանձնացնել Հայաստանի զարգացման ծրագրերի և դրանց հիման վրա՝ զարգացման ռազմավարության մշակումը, քանի որ ներկայում մեր երկրի

[57] *Հարությունյան Գ., Միմավորյան Ա., Հովյան Վ., Ղանալանյան Տ.*, Սփյուռքի գիտավերլուծական հանրությունը, կազմակերպչական խնդիրներ և համագործակցության հեռանկարներ, Երևան, 2013:

առջև ծառացած կարևորագույն խնդիրներից է նրա զարգացման ապահովումը: Խոսքը վերաբերում է թե՛ տնտեսական, թե՛ ենթակառուցվածքների (էներգետիկ համակարգ, հաղորդակցության համակարգ և այլն), թե՛ ժողովրդագրական, թե՛ գիտության, թե՛ ռազմական (բանակի հզորացում) և թե՛ այլ ոլորտների զարգացմանը:

Ավելորդ չէ հիշատակել, որ գիտավերլուծական կառույցների խնդիրը ոչ միայն հետազոտական և վերլուծական գործունեությամբ զբաղվելն է, համապատասխան կանխատեսումներով և խորհրդատվությամբ հանդես գալը, այլև տարատեսակ բարեփոխումների փաթեթների, զարգացման ծրագրերի, ռազմավարությունների և անգամ օրենքի նախագծերի մշակումը: Ըստ էության, «ուղեղային կենտրոններն» ու փորձագիտական հանրությունը, լինելով միջնորդավորող օղակ «գիտություն-պետություն» հարաբերություններում, իրենց գործունեության մեջ ավելի մեծ տեղ են տալիս կիրառական հետազոտություններին: Դրանք մասնագիտանում են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության տարբեր բնագավառներում, կենտրոնանում տարածաշրջանային խնդիրների վրա, հետազոտում արտաքին քաղաքականության ողջ սպեկտրը:

Սփյուռքի գիտավերլուծական հանրության ներգրավումը Հայաստանի զարգացման ծրագրերի և ռազմավարության մշակման գործում նպատակահարմար է հետևյալ առումներով.

- Լինելով տարբեր երկրների (Ֆրանսիա, Շվեյցարիա, Ուկրաինա, Ռուսաստան, Իսրայել և այլն) քաղաքացիներ՝ նրանք որոշակիորեն տիրապետում են իրենց կեցության երկրների զարգացման փորձին, ինչը կարող է ուսանելի լինել Հայաստանի համար: Այս տեսակետից կարևոր է հատկապես Հայաստանի հետ համեմատելի (տարածքային, բնակչության թվաքանակի, քաղաքական միջավայրի, աշխարհագրական դիրքի և այլ առումներով) երկրների, օրինակ՝ Իսրայելի փորձը:
- Լինելով սփյուռքի ներկայացուցիչներ՝ նրանք, թերևս, ավելի լավ են պատկերացնում իրենց համայնքների կարողությունները Հայաստանի զարգացմանը նպաստելու գործում: Այս հանգամանքը նույնպես կարևոր է այն առումով, որ սփյուռքի հնարավորությունների ներգրավումն էական նշանակություն ունի Հայաստանի զարգացման գործում:
- Լինելով տարբեր երկրների գիտական, ակադեմիական հաստատությունների, վերլուծական կենտրոնների աշխատակիցներ՝ նրանց միջոցով հնարավորություն է ստեղծվում հաստատել միջազգային կապեր արտերկրի բուհական և գիտատեխնիկական հաստատությունների հետ: Սփյուռքի գիտավերլուծական հանրության մտավոր «արտադրանքից», խորհրդատվություններից, իրավիճակային գնահատականներից, քաղաքական կամ

որևէ այլ իրադարձության զարգացման հնարավոր սցենարների վերաբերյալ գնահատականներից կարող են օգտվել ՀՀ պատկան մարմինները: Մյուս կողմից՝ նրանք կարող են օգտակար լինել լոբբիստական և քարոզչական աշխատանքներում՝ համագործակցելով ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների հետ:

Կարծում ենք, փորձագիտական-վերլուծաբանական ներուժի հնարավորությունները նյութականացնելու նպատակով արժե արտերկրում հիմնադրել հայ փորձագետների միություններ, որոնք կարող են վերածվել հանրային դիվանագիտությանն աջակցող «փափուկ ուժի»: Իհարկե, պետք է նախ գնահատել հնարավոր քաղաքական ռիսկերը, այնուհետև հիմնադրման նպատակահարմարությունը, համագործակցության առավել արդյունավետ ձևաչափերի մշակման իրականացումը:

4. Պետություն-սփյուռք գործակցությունում մի շարք երկրների քաղաքականության էական բաղադրիչ է հանդիսանում *մասնագիտական հայրենադարձությունը:* Դրա մասին է վկայում և օրինակելի նախաձեռնություն է Արգենտինայի նախկին նախագահ Ն.Կիշների հովանավորությամբ Գիտության, տեխնոլոգիայի և արտադրական նորարարությունների նախարարության կողմից 2003թ. ստեղծված և սփյուռքի գիտական կադրերի համար նախատեսված *RAICES* («Արմատ») ծրագիրը, որի շրջանակներում 2018թ. հոկտեմբերի

դրությամբ այդ երկիր է հայրենադարձվել սոցիալական գիտությունների, կենսաբանության, տեխնոլոգիաների և առողջապահության ոլորտներում աշխատող շուրջ 1323 մասնագետ[58]: Ուշագրավ է նաև Չինաստանի փորձը: Մասնավորապես, արտերկրում կրթություն ստացած կամ երկար ժամանակ արտասահմանում աշխատող բարձրորակ գիտական կադրերին հայրենադարձելու նպատակով ՉԺՀ-ում գործի են դրվել մեծածավալ պետական ծրագրեր: «Վերադարձե՛ք և ծառայե՛ք հայրենիքին» կարգախոսից կառավարությունն անցում կատարեց նոր կարգախոսի՝ «Ծառայե՛ք հայրենիքին»: Հայրենադարձմանն ուղղված նախաձեռնությունները հաջորդեցին մեկը մյուսին՝ «100 տաղանդ», «1000 տաղանդ», «Անդրծովյան տաղանդները հայրենիքի ծառայության մեջ» և այլն[59]: «100 տաղանդ» պետական ծրագիրն, օրինակ, ոչ միայն ապահովում է գիտնականներին բնակարանով, աշխատանքով և բարձր աշխատավարձով (3 տարվա համար՝ շուրջ 250.000 եվրո), այլև մասամբ ֆինանսավորում է արտասահմանում կրթություն ստացած հայրենադարձված գիտնականների երեխաներին: Արդյունքում՝ այսօր ՉԺՀ Գիտությունների ակադեմիայի նախագահության անդամների կեսը և առաջատար ինստիտուտների ղեկավարների մեկ երրորդը

[58] Արգենտինայի Գիտության, տեխնոլոգիայի և արտադրական նորարարությունների նախարարության կայք, http://www.raices.mincyt.gov.ar/

[59] *Душина С.А., Ащеулова Н.А., Ломовицкая В.М.,* Модели взаимодействия стран-доноров с научной диаспорой: от возвращения к сотрудничеству, Наука та наукознавство, № 3, 2012, с. 144.

կազմում են հայրենադարձվածները[60]: Ֆինանսավորման խնդիրը լուծելու նպատակով 2004թ. ստեղծվեց *«Բնական գիտությունների ազգային ֆոնդ»* կազմակերպությունը, որի ֆինանսական կարողությունները հասնում էին $451 մլն-ի (2004թ.): Կազմակերպությունն աջակցեց չինական ծագում ունեցող ամերիկաբնակ գիտնականներին՝ ներգրավվելու երկրի հետազոտական ծրագրերում: Հատկանշական է, որ ՉԺՀ-ն չսահմանափակվեց միայն մասնագետների հայրենադարձման պետական ծրագրերով, այլև խրախուսեց համագործակցության տարբեր եղանակների կիրառումը:

Նույն կերպ, Թուրքիայի գիտատեխնիկական հետազոտությունների խորհրդի միջազգային կապերի վարչության աջակցությամբ 2007-2015թթ. Թուրքիա է վերադարձել 541 մասնագետ, որոնք աշխատանքի են տեղավորվել գիտատեխնիկական և արդյունաբերական տարբեր ձեռնարկություններում, համալսարաններում, մասնավոր հատվածում[61]:

Կարելի է նշել նաև չիլիական օրինակը, որտեղ սփյուռքի գիտական ներուժն օգտագործվեց ավտորիտար պետությունում՝ Պինոչետի իշխանության տարիներին: Նա ընտրեց Չիլիի տնտեսական զարգացման կոշտ և ծայրահեղ մեթոդներ: Նա հրավիրեց և իր շուրջը համախմբեց չիլիացի այն երիտասարդներին (պատմության մեջ նրանք հայտնի են

[60] *Артюхин М.И., Мееровская О.А.,* Научная диаспора как ресурс развития белорусской науки, Социологический альманах, Выпуск № 3, 2012, с. 365.
[61] *B.Çubukçu,* Beyin göçüne bürokrasi pürüzü, http://www.aljazeera.com.tr/al-jazeera-ozel/beyin-gocune-burokrasi-puruzu.

«Չիկագոյի տղաներ» անվամբ), որոնք տնտեսագիտություն ուսումնասիրելու էին մեկնել ԱՄՆ՝ Չիկագոյի համալսարան, և չէին վերադարձել հայրենիք: 1974թ. սկսած՝ պինոչետյան ռեժիմում նրանք հասան ղեկավար դիրքերի՝ գլխավորելով տնտեսական պլանավորման բաժանմունքների մեծ մասը[62]:

Ակնհայտ է, որ ՀՀ ներկայիս սոցիալ-տնտեսական պայմանները բավարար չեն հայրենադարձման նման լայնածավալ նախագծերի իրականացման համար: Սակայն կարելի է մշակել փոքր ծավալների հայրենադարձման ծրագրեր՝ գերակայություններ ճանաչված ոլորտների համար: Բնական է, որ պետք է հաշվի առնվեն կազմակերպչական և իրավական մի շարք հարցեր (վարձատրման, բնակարանով ապահովման, ենթակառուցվածքների բավարար վիճակի, ժամանակակից սարքավորումների առկայության և այլ պայմաններ):

5. Կազմակերպել *գիտական սփյուռք-պետություն* համագործակցության խնդիրներին նվիրված գիտագործնական համաժողովներ, սեմինարներ: Այս կարգի միջոցառումներ անցկացնելը շատ նպատակահարմար է, քանի որ, որքան էլ փորձենք սփյուռքն ինտեգրել տարբեր ոլորտներին, անհրաժեշտ է նախապես պատրաստ լինել լսելու մասնագետների կարծիքներն ու տեսակետները տվյալ հարցերի առնչությամբ: Կարծում ենք, շեշտն առաջին հերթին անհրաժեշտ է

[62] *Кангас С.,* Чикагские мальчики и чилийское экономическое чудо, http://scepsis.net/library/id_557.html.

դնել համագործակցության ձևերի, կիրարկման մեխանիզմների և միասնական օրակարգի ստեղծման վրա՝ հաշվի առնելով սփյուռքի և Հայաստանի հնարավորությունների ողջ համալիրը, այնուհետև կազմակերպչականից աստիճանաբար անցում կատարել նեղ մասնագիտական հարցերին: Ընդ որում, միասնական օրակարգը կարող է նախատեսված լինել ինչպես ընդհանուր փոխգործակցության համար (նկատի ունենք պետություն-գիտական սփյուռք հարաբերություններն ընդհանրապես), այնպես էլ ըստ ոլորտների:

6. Անհրաժեշտ է իրականացնել միջգիտակարգային բնույթի հետազոտություններ՝ անհատական մակարդակով սփյուռքի գիտնականների քանակական և որակական ցուցանիշների վերհանման, համագործակցության հնարավորությունների և խոչընդոտների գնահատման ուղղությամբ: Մեր կողմից այս ուղղությամբ կատարվել են որոշակի աշխատանքներ, որոնք, սակայն, բավարար չեն[63]:

7. Ժամանակակից համացանցային տեխնոլոգիաները թույլ են տալիս գիտելիքի և տեղեկատվության հեռահար փոխանակումներ իրականացնել, ինչի շնորհիվ աշխարհում մեծ տարածում են գտել տարաբնույթ առցանց հեռավար կրթա-

[63] Տե՛ս *Նահապետյան Հ., Վերանյան Կ., Սիմավորյան Ա., Ղանալանյան Տ.,* Հայ համայնքն ԱՄՆ-ում, Երևան, 2010, *Հարությունյան Գ., Սիմավորյան Ա., Հովյան Վ., Ղանալանյան Տ.,* Սփյուռքի գիտավերլուծական հանրությունը, կազմակերպչական խնդիրներ և համագործակցության հեռանկարներ, Երևան, 2013, *Սիմավորյան Ա., Հովյան Վ., Ղանալանյան Տ.,* Արտերկրի հայագիտական կենտրոնները. ներուժի գնահատում, Երևան, 2014:

կան նախագծեր։ Հայաստանը և սփյուռքի տարբեր համայնքները կարող են կիրառել այսպիսի հնարավորությունը գիտակրթական ոլորտում համագործակցության, առկա ցանցերի ամրապնդման և զարգացման, ինչպես նաև փորձի և գիտելիքի արդյունավետ փոխանակումների նպատակով։ Այս նպատակների իրականացման համար արդիական են Հայկական հանրության (ՀՀ, ԼՂՀ, սփյուռք) գիտակրթական ռեսուրսների մոբիլիզացման միջոցով Հայաստան-սփյուռք առցանց համալսարանի ստեղծումը և դասընթացների հարթակի կազմակերպումը։ Այն կդառնա ընդհանուր գիտակրթական հարթակ Հայաստանի և սփյուռքի երիտասարդության ու մտավոր շրջանակների համար և կնպաստի ոչ միայն հայկական հանրության գիտակրթական ինտեգրմանը, այլև ընդհանուր մտավոր ռեսուրսների զարգացմանը, ինչը վճռորոշ նշանակություն ունի առկա մարտահրավերներին արդյունավետ դիմագրավելու տեսանկյունից։ Այդ կերպ առցանց համալսարանը կնպաստի հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդմանը և համատեղ նախագծերի մշակման հարթակի ձևավորմանը։

«Նորավանք» ԳԿՀ-ն արդեն իսկ ջանքեր է գործադրում ***Հայաստան-սփյուռք առցանց համալսարանի,*** այդ հենքի վրա նաև ***Համահայկական ռազմավարական հետազոտությունների կենտրոնի*** (ուղեղային կենտրոն) հիմնադրման ուղղությամբ։

8. Հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդման նպատակով ռազմավարական նշանակության նախագծերի (գիտատար արդյունաբերության զարգացում, մասնագիտական հայրենադարձություն և այլն) մշակում տարբեր ոլորտներում ու գիտաճյուղերում և դրանց քննարկման նպատակով համահայկական հարթակների ձևավորում՝ պետական այն գերատեսչությունների ներքո, որոնք պատասխանատու են համապատասխան ոլորտի զարգացման համար։ Այդ դեպքում պետական հաստատությունները կունենան սփյուռքի վրա կենտրոնացված նախագծեր։

9. Նպատակային աշխատանքների իրագործում սփյուռքի մասնագետների հետ՝ ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների կողմից տարաբնույթ միջոցառումների (սեմինարներ, կլոր սեղաններ և այլն) շրջանակներում։ Այդ հարթակները հնարավորություն կտան սփյուռքի մեր հայրենակիցներին ստանալ տեղեկատվություն (նաև՝ գործարար միջավայրի հնարավորություններ) Հայաստանի գիտական ոլորտում տեղի ունեցող զարգացումների, համագործակցության հնարավոր ուղիների, մեխանիզմների և այլնի մասին։

10. Պետություն-մասնավոր համագործակցությամբ ստեղծված «Ինժեներական քաղաք»-ում, որտեղ գործունեություն են ծավալում բարձր տեխնոլոգիաների ոլորտի ընկերություններ, հետազոտական, արտադրական և կրթական

հատվածներում տարբեր նախագծերով կարող է ներգրավվել նաև սփյուռքի գիտատեխնոլոգիական ներուժը[64]:

Գիտամանկավարժական գործի խթանման համար կարելի է առաջարկել համագործակցության հետևյալ ձևերը.

1. անհատական և կոլեկտիվ հետազոտությունների պատվիրում,
2. հետազոտական նախագծերի կատարում (այդ թվում՝ միջազգային) սփյուռքի և Հայաստանի գիտնականների ներգրավմամբ,
3. առցանց դասախոսությունների, գիտաժողովների կազմակերպում ժամանակակից հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ,
4. տարբեր ձևաչափերով հանդիպում-քննարկումների կազմակերպում ընդհանուր և կոնկրետ խնդիրների շուրջ (ՀՀ-ում, արտերկրում),
5. հոդվածների, դասագրքերի և գիտական հետազոտությունների գրախոսում,
6. ասպիրանտների պատրաստում,
7. ներգրավում գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդների կազմում (մեխանիզմների հստակեցման դեպքում),
8. գիտահետազոտական նախագծերի փորձագիտական գնահատում,

[64] «Ինժեներական քաղաք»-ի ստեղծման հայեցակարգին ծանոթանալու համար մանրամասն տե՛ս http://www.irtek.am/views/act.aspx?aid=94066

9. համատեղ գիտական լաբորատորիաների և գիտահետազոտական կենտրոնների հիմնում: Միջազգային համագործակցությունում լայն տարածում ունի, օրինակ, «հայելային լաբորատորիաների» մոդելի կիրառումը, որը գործում է հետևյալ սկզբունքով. արտասահմանում բնակվող հայ գիտնականի ղեկավարությամբ գործող լաբորատորիայի համանմանությամբ լաբորատորիա է ստեղծվում Հայաստանում: Համագործակցության նման մոտեցումը կիրառվում է հատկապես ռուսական գիտական սփյուռքի հետ հարաբերություններում[65],
10. սփյուռքի գիտնականների կողմից ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործման հնարավորությունների գնահատում Հայաստանում, այդ ոլորտներում մասնագետների վերապատրաստում, փորձի փոխանակում,
11. ուսումնական, կրթական ծրագրերով (կարճաժամկետ/երկարաժամկետ) դասավանդում,
12. սփյուռքի մասնագիտական ներուժի ներգրավում ՀՀ գիտակրթական համակարգի, կրիտիկական ենթակառուցվածքների արդիականացման մեջ՝ փորձագիտական, խորհրդատվական և այլ բնույթի աշխատանքների միջոցով,

[65] Տե՛ս *Дежина И.,* Научно-образовательные центры и лаборатории: государственные меры и успешные практики, Журнал, Экономико-политическая ситуация в России, Номер: 5, 2012, с. 43-45 և Диаспора в инновационных системах, http://www.ng.ru/nauka/2011-01-26/9_diaspora.html

13. հետազոտական և կիրառական բնույթի (մեգա)նախագծերի իրագործում՝ նախատեսված հատուկ սփյուռքի մասնագետների համար,
14. մասնավոր հատված-սփյուռք հարաբերությունների հաստատմանն ու զարգացմանը միտված բիզնես նախագծերի իրագործում արտադրական ոլորտների համար: Այն կարող է որոշ չափով բարձրացնել գիտություն-արտադրություն-բիզնես հարաբերությունների մակարդակը,
15. չնայած մի շարք պետություններ գիտական սփյուռքի հետ կապերում իրականացնում են հեռավար գիտաուսումնական ծրագրեր, լայն կիրառություն ունի նաև տարբեր մասնագիտական պրոֆիլներով *«Ամառային դպրոցների»* պարբերաբար անցկացումը: Նման ձևաչափով աշխատանքներն օգտակար կարող են լինել փոխադարձ շփումների հաստատման տեսանկյունից:

Նշենք, որ վերը հիշատակված համագործակցության որոշ ձևեր առկա են բուհական-ակադեմիական, մասնավոր հատվածի, պետական հաստատությունների և սփյուռքի միջև հարաբերություններում: Այդուհանդերձ, չբավարարվելով ձեռք բերվածով՝ անհրաժեշտություն կա էլ ավելի խորացնել և ընդլայնել հարաբերություններն ինչպես այդ, այնպես էլ նոր եղանակներով: Միևնույն ժամանակ, այլ սփյուռքերի փորձն ուսումնասիրելով՝ հանգում ենք այն եզրակացությա-

նը, որ համագործակցությանը խոչընդոտում են մի շարք գործոններ, որոնք մասամբ բնորոշ են մեր իրողություններին, ինչպես, օրինակ՝ ֆինանսական սղությունը, ցածր վարձատրությունը, ենթակառուցվածքների ոչ բավարար վիճակը, գիտական արդյունքների առևտրայնացման հետ կապված հարցերը, պետական հարկային քաղաքականությունը և ընդհանրապես երկրի սոցիալ-տնտեսական, քաղաքական, գիտական համակարգում առկա հիմնախնդիրները:

Ինչ վերաբերում է համագործակցության ձևերին, ապա մեզ մոտ գերակայում է ***«ներքևից վերև» ռազմավարական մոդելը (ապակենտրոնացված մոտեցում)***: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ այս մոտեցման դեպքում սփյուռքի մասնագիտական ներուժը դիտվում է որպես երկխոսության, կոորդինացման և ինտեգրման նպատակ[66]: Այն իրագործելու համար կիրառվում են սփյուռքի հետ հարաբերվելու զանազան գործիքներ, ինչպես, օրինակ՝ սփյուռքի մասնագետներին միավորող գիտական ցանցերը, մասնագիտական համաժողովները, սփյուռքի գիտական հանրույթի հետ երկխոսությանը և համագործակցությանը միտված կենտրոնացված կառույցները, տեխնոպարկերը և այլն: Համագործակցության նման մոդելը հատուկ է սփյուռք ունեցող շատ երկրների (Հնդկաստան, Արգենտինա, Ռուսաստանի Դաշնություն, Կո-

[66] Նշենք, որ բացի այս մոդելից, գործում է նաև «վերևից ներքև» ռազմավարական մոդելը (կենտրոնացված մոտեցում): Համագործակցության մոդելների մասին ավելի մանրամասն տե՛ս *Дежина И.,* Развитие сотрудничества с русскоязычной научной диаспорой: опыт, проблемы, перспективы, доклад, № 23, Москва, 2015.

լումբիա), օրինակ՝ Պեկինի քաղաքային վարչության հիմնադրած 23 ուսանողական վենչուրային պարկերը հնարավորություն են տալիս գիտատեխնիկական ոլորտի չինական սփյուռքի առաջատար մասնագետներին ստեղծելու գիտատար սթարթափեր[67]:

Չնայած նման կառույցների և հարթակների առկայությամբ պայմանավորված ավելի դյուրին է դառնում գիտական սփյուռք-պետություն փոխգործակցությունը, սակայն ի հայտ են գալիս համագործակցությանը խոչընդոտող ներքին և արտաքին պատճառներ. բացակայում են սփյուռքի մասնագետների մասնակցությամբ ռազմավարական նշանակության ոլորտների զարգացմանն ուղղված նախագծերը, պետական մակարդակով անտեսվում է կամ, առնվազն, մեծ նշանակություն չի տրվում սփյուռքի գիտական ներուժի օգտագործմանը (նույնիսկ այն պարագայում, երբ սփյուռքից հայրենիքին են ուղղվում համագործակցության ազդակներ), կամ երկկողմ հանդիպումներից հետո կորչում է համագործակցության նկատմամբ հետաքրքրությունը:

Այսպիսի խնդիրների բախվում են սփյուռք ունեցող մի շարք երկրներ: Օրինակ, անդրազգային սփյուռքյան գիտական ցանցեր, ինչպիսին էին *South African Network of Skills Abroad*-ը և *Colombian Researchers Abroad*-ը, որոնք մի քանի ուղղություններով արդյունավետ համագործակցություն էին իրականացրել, ֆինանսական և վերը հիշատակված խնդիր-

[67] Նույն տեղում, էջ 25:

ների հետևանքով մատնվեցին անգործության և փակվեցին[68]: Ըստ էության, նման միտումները բացահայտում են սփյուռքյան գիտական ցանցերի փխրունությունը:

Այդ իսկ պատճառով ՀՀ պետական և մասնավոր կառույցները պետք է ռազմավարական տարբեր նախաձեռնություններով խթանեն հայկական սփյուռքում գործող մասնագիտական միությունների աշխատանքը (Սփյուռքահայ գիտնականների ասոցիացիա, ԱՐՓԱ ինստիտուտ և այլն), նաև ստեղծեն ժամանակի պահանջներին համապատասխան նոր կառույցներ, ընդլայնեն գիտական ցանցերի աշխարհագրությունը, կանոնավոր կերպով անցկացնեն մասնագիտական համաժողովներ՝ միջազգային փորձում արձանագրված բացասական միտումներից խուսափելու համար: Վերջիններս կամրապնդեն պետության և սփյուռքի մասնագիտական հանրույթների միջև հարաբերությունները, նաև կամուրջ կհանդիսանան ներսփյուռքյան կապերի ստեղծման ու զարգացման համար:

Այսպիսով, սփյուռքի ավանդը Հայաստանի գիտական ենթակառուցվածքի զարգացման գործում դրսևորվում է ինչպես մասնավոր ծրագրերի, այնպես էլ ինստիտուցիոնալ մակարդակներով: Ինստիտուցիոնալ մակարդակով սփյուռքի

[68] Ընդ որում, այս երկու կառույցների գործունեությունը համարվում է ամենահաջողված փորձը պետություն-գիտական սփյուռք հարաբերությունների պատմության մեջ, մանրամասն տե՛ս *Chaparro F., Jaramillo H., Quintero V.,* Promise and Frustration of Diaspora Networks: Lessons from the Network of Colombian Researchers Abroad», Diaspora Networks and the International Migration of Skills: How Countries Can Draw on Their Talent Abroad, World Bank Institute Development Studies, 2006, pp. 187-198.

աջակցությունը հայրենի գիտությանը դրսևորվում է գիտակրթական կառույցների, գիտական հետազոտությունները կանոնավոր կերպով խրախուսող հաստատությունների հիմնման և գործարկման միջոցով: Այդ կառույցների գործառնությունը նվազեցնում է որակյալ գիտական կադրերի արտագաղթը, խթանում տարբեր հետազոտությունները, մրցակցություն առաջացնում գիտական գործունեության ասպարեզում: Սոցիալ-տնտեսական նշանակության ենթակառուցվածքների զարգացման գործում սփյուռքի ներդրումը դրսևորվում է տարբեր բնագավառների համար տեխնիկական սարքավորումների տրամադրմամբ, մասնագետների (վերա)պատրաստմամբ, խորհրդատվական աշխատանքներով և այլն:

Իրենց հերթին, ՀՀ պետական մարմիններն ու գիտական կառույցները մասնակցում են համահայկական մասնագիտական ընկերակցությունների հիմնադրմանն ու ցանցերի ընդլայնմանը, ինստիտուցիոնալացված հարթակների միջոցով նպաստում սփյուռքի մասնագիտական ներուժի կոորդինացմանը՝ փորձելով այդ կերպ սփյուռքի մասնագետներին ներգրավել հայրենի երկրի սոցիալ-տնտեսական, գիտակրթական և այլ ոլորտներում:

ՍՓՅՈՒՌՔԻ ԻՆՔՆԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՄՈԴԵԼՆԵՐ

Սփյուռքի ինքնակազմակերպման գործում կենսական անհրաժեշտություն են կազմակերպական կառույցները, որոնց միջոցով է վերջինս որպես կենդանի օրգանիզմ իրականացնում իր գործունեությունը: Այս տեսակետից որպես ամբողջ սփյուռքի ինքնակազմակերպման ինստիտուտ կարևոր նշանակություն ունի համազգային կազմակերպության ձևավորումը՝ ի տարբերություն համայնքային կառույցների, որոնք հանդիսանում են սփյուռքի առանձին համայնքների ինքնակազմակերպման ինստիտուտներ:

Խնդիրը, բացի սփյուռքի ինքնակազմակերպումից, կարևոր է նաև Հայաստանի (և ոչ միայն) հետ հարաբերություններում ամբողջ սփյուռքը ներկայացնելու, նրա ներքին հատվածականությունը (քաղաքական, դավանական և այլ հիմքերով) հաղթահարելու, հայության ներուժը համախմբելու, այդ ներուժն առավել համակարգված ու արդյունավետ օգտագործելու, հայրենիք-սփյուռք համագործակցության առավել արդյունավետ ուղիներ մշակելու տեսանկյուններից: Առանց հա-

մազգային կազմակերպության ձևավորման, ներկայում սփյուռքի որևէ կառույց չի կարող հավակնել ներկայացնելու ամբողջ սփյուռքը, հետևաբար, Հայաստանի (և ոչ միայն) հետ հարաբերություններում չի կարող ունենալ համայն սփյուռքի անունից խոսելու օրինական և բարոյական իրավունք: Իսկ հատվածականության հաղթահարման տեսանկյունից համասփյուռքյան կառույցի առկայությունը հնարավորություն կստեղծի, որպեսզի այդ հատվածականությունը վերածվի բազմազանության, որը, զուգակցված միասնականության ոգու հետ, կդառնա սփյուռքի հզորության և հարստության հիմքը:

Համազգային կառույցի առկայությունը, միաժամանակ, չի նշանակում մյուս կառույցների (կուսակցական, հոգևոր-եկեղեցական, բարեգործական և այլն) գործունեության դադարեցում: Համազգային կառույցի գործունեությանը զուգահեռ՝ այդ կառույցները կարող են շարունակել իրենց մասնավոր գործունեությունը, ինչը կարող է առողջ մրցակցության հիմք դառնալ նրանց միջև՝ զարգացնելով և մեծացնելով վերջիններիս և դրանով իսկ՝ համասփյուռքյան ներուժը: Իսկ համազգային նշանակության հարցերում, միևնույն է, սփյուռքի բոլոր հատվածները համասփյուռքյան կառույցի ձևաչափով կդրսևորեն իրենց միասնականությունը և համագործակցությունը:

Սփյուռքում համազգային կառույցի ձևավորման խնդիրը հայ հասարակական-քաղաքական շրջանակներում առկա է գրեթե մեկ հարյուրամյակ՝ հայկական սփյուռքի ձևավորու-

մից ի վեր[69]։ Դեռևս Առաջին աշխարհամարտի և Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին բռնագաղթած արևմտահայերի հրավիրած Արևմտահայոց համագումարները կարելի է դիտել որպես սփյուռքի համազգային կառույցի նախատիպ։ Այդ համագումարներում քննարկվում էին բռնագաղթի ենթարկված արևմտահայությանն առնչվող ամենատարբեր խնդիրներ՝ սկսած նրանց դրությունը թեթևացնելու նպատակով օգնության կազմակերպումից, վերջացրած նրանց հայրենիք վերադառնալու խնդրով։

Հետագայում՝ 1920-ական թթ., սփյուռքահայ հասարակական-քաղաքական շրջանակներում շրջանառվել է հայկական ավանդական երեք կուսակցությունների՝ ՀՅԴ, ՌԱԿ և ՍԴՀԿ համաձուլման միջոցով սփյուռքի համազգային կազմակերպության ստեղծման գաղափարը։ Սփյուռքում շրջանառության մեջ է դրվել նաև Համահայկական կոնգրեսի հրավիրման գաղափարը։ Այս գաղափարները, սակայն, լինելով խիստ ընդհանրական, զուրկ են եղել բովանդակային կոնկրետությունից, ինչն էլ, հայկական սփյուռքում առկա ներքին

[69] Թեև դեռևս IV դարից սկսած՝ հայերի պարբերական բռնագաղթերի հետևանքով հայկական գաղթօջախներ աշխարհի տարբեր անկյուններում ձևավորվել են շատ վաղուց, այնուամենայնիվ, ներկայում գիտական շրջանակներում ընդունված է այն տեսակետը, որ հայկական սփյուռքը Հայոց ցեղասպանության հետևանք է։ Ավելի կոնկրետ՝ հայկական սփյուռքի առաջացումը վերագրվում է 1923թ. հունիսի 24-ին ստորագրված Լոզանի պայմանագրին, որով Առաջին համաշխարհային պատերազմում հաղթած Անտանտի երկրները «թաղեցին» Հայկական հարցը՝ խորտակելով ցեղասպանության ընթացքում հայրենազրկված արևմտահայության հայրենիք վերադառնալու հույսերը։

տարաձայնությունների հետ միասին, խոչընդոտ է հանդիսացել դրանց իրագործման ճանապարհին։

1980-ական թթ. ազգային վերազարթոնքը Հայաստանում, վերջինիս անկախացումը 1991թ., սփյուռքահայ կառույցների գործունեության ծավալումը Հայաստանում, Արցախի ազատագրումը նոր հորիզոններ բացեցին հայրենիք-սփյուռք հարաբերությունների որակն ու մակարդակն էլ ավելի բարձրացնելու համար։ Խնդիր դրվեց ընդլայնել և խորացնել Հայաստան-սփյուռք համագործակցությունը։ Իսկ այս պայմաններում չէր կարող կրկին օրակարգային չդառնալ համասփյուռքյան կառույցի ստեղծման խնդիրը, որը պետք է ներկայացնի համայն սփյուռքը հայրենիքի հետ հարաբերություններում։

Հարկ է նշել, որ սփյուռքում միշտ էլ գործել են մի շարք կառույցներ, որոնք պայմանականորեն կարելի է համարել համազգային կազմակերպություններ։ Այդ կառույցներն են ՀՅԴ-ն, ՍԴՀԿ-ն, ՌԱԿ-ը, Հայ Առաքելական, Կաթողիկե և Ավետարանական եկեղեցիները, ՀԲԸՄ-ն և այլն։ Վերջիններս առանցքային դեր ունեն ինչպես սփյուռքի ինքնակազմակերպման, այնպես էլ հայրենիք-սփյուռք հարաբերությունների կերտման գործում։ Սակայն թվարկված կառույցները համազգային են այնքանով, որքանով նրանց գործունեությունը տարածվում է աշխարհագրական առումով ավելի լայն շրջանակների հայության վրա։ Մինչդեռ գործունեու-

թյան տարածական ընդգրկումը համազգային կառույցի բնութագրման չափորոշիչներից միայն մեկն է: Դրանից բացի, կան նաև այլ բնութագրիչներ, որոնք, ցավոք, առկա չեն վերը թվարկված համազգային կառույցներում: Այդ բնութագրիչ-ների մասին կխոսվի ստորև:

Հարկ է նշել, որ ներկայում գործող Համաշխարհային հայկական կոնգրես և Արևմտահայոց համագումար կազմա-կերպություններն անվանապես համապատասխանում են համազգային կառույցի բնութագրին: Գործնականում, սա-կայն, նրանք դեռևս մեծ ճանապարհ ունեն անցնելու իրական համազգային կամ համասփյուռքյան կառույցի վերածվելու համար: Հետևաբար, ցավով պետք է արձանագրել, որ հակա-ռակ սփյուռքի տևական գոյությանը, համասփյուռքյան կա-ռույցի ձևավորման և գործառնության հարցը դեռևս սպասում է իր լուծմանը:

Սփյուռքի ինքնակազմակերպման խնդրի լուծումը ենթադրում է երկու մոդել: Առաջինը պայմանականորեն կա-րելի է անվանել *միատարր մոդել*, որն առավելապես շեշտը դնում է սփյուռքի կազմակերպությունների միավորման վրա: Երկրորդը կարելի է անվանել *համադաշնային մոդել*, որը հիմնված է տարածքային սկզբունքով սփյուռքի համայնքնե-րի միավորման գաղափարի վրա:

Միատարր մոդել. համազգային կառույցի սկզբունքները և կազմակերպական կառուցվածքը

Սփյուռքում համազգային կառույցի ձևավորումը և գործունեությունը պետք է հիմնված լինեն որոշակի սկզբունքների վրա։ Կարծում ենք, համասփյուռքյան կառույցի գործունեության հիմքում պետք է ընկած լինեն հետևյալ հիմնարար սկզբունքները.

1. *Ներկայացուցչականություն։* Այս սկզբունքը ենթադրում է համազգային կառույցի գործունեության մեջ սփյուռքի բոլոր հատվածների ներկայացվածություն։ Աշխարհագրական առումով այն ենթադրում է հայկական սփյուռքի բոլոր համայնքների մասնակցություն համազգային կառույցի գործունեության մեջ։ Կազմակերպական առումով այս սկզբունքը ենթադրում է սփյուռքյան կազմակերպությունների առավելագույն լայն ընդգրկվածություն համազգային կառույցի գործունեության մեջ։ Սփյուռքում գործող ամենանշանավոր կառույցները պետք է ներկայացված լինեն այնտեղ։ Դավանական առումով համազգային կառույցի գործունեության մեջ ընդգրկված պետք է լինեն հայության երեք դավանանքային շերտերն էլ՝ հայ առաքելականները, կաթողիկեները և ավետարանականները։ Կուսակցական տեսանկյունից համազգային կառույցի գործունեության մեջ պետք է ընդգրկվեն սփյուռքում գործող հայկական երեք ավանդական կուսակցական շերտերը՝ դաշնակցականները, հնչակյանները և ռամկավարները։

2. Վերկուսակցականություն: Հայտնի է, որ սփյուռքում գործող հայկական ավանդական երեք կուսակցությունների՝ ՀՅԴ-ի, ՍԴՀԿ-ի և ՌԱԿ-ի միջև որոշակի մրցակցություն, եթե չասենք՝ պայքար կա, որը դրսևորվում է թե՛ գաղափարական տարաձայնություններով, թե՛ սփյուռքում իրենց ազդեցության ոլորտն ընդլայնելու համար պայքարով և թե՛ կոնկրետ այս կամ այն խնդրի շուրջ ունեցած հակասություններով[70]: Մրցակցությունն ինքնին դրական երևույթ է, եթե կուսակցությունները համազգային նշանակության հարցերում կարողանան պահպանել ազգային միասնության ոգին և գործեն համատեղ: Համազգային նշանակություն ունեցող հարցերում միասնաբար գործելու լավագույն հարթակի հավակնություն ունի համասփյուռքյան կառույցը:

3. Վերդավանականություն: Այն, ինչ ասվեց կուսակցությունների մասին, վերաբերում է նաև Հայ Առաքելական, Կաթողիկե և Ավետարանական եկեղեցիներին: Բացի այդ, դավանական տարբերությունների կողքին կրոնական՝ քրիստոնեական և ազգային ընդհանրությունների շեշտադրումն ու առաջմղումը լուրջ հիմք են կրոնական հանդուրժողականության հաստատման համար: Ինչպես կուսակցությունների, այնպես էլ հարանվանությունների պարագայում, համահայկական կառույցն այն տեղն է, որտեղ ազգային ընդհանրությունը ստվերում է բոլոր կարգի, տվյալ պարա-

[70] Օրինակ՝ խորհրդային տարիներին Հայաստանի նկատմամբ վերաբերմունքի և դիրքորոշման, հայրենադարձության և այլ հարցերում:

գայում՝ դավանական կամ հարանվանական տարբերությունները՝ հիմք հանդիսանալով Հայ Առաքելական, Կաթողիկե և Ավետարանական եկեղեցիների համագործակցության համար։

Միասին դիտարկելով վերկուսակցականության և վերդավանականության սկզբունքները՝ կարող ենք ասել, որ խոսքը վերաբերում է սոցիալ-քաղաքական և կրոնադավանական գաղափարախոսություններից վեր կանգնելուն, երբ գործ ունենք համազգային խնդիրների լուծման հետ։ Այլ կերպ ասած՝ համազգային խնդիրների լուծման գործում գաղափարական տարաձայնությունները՝ սոցիալ-քաղաքական և կրոնադավանաբանական հիմքերով, պետք է երկրորդական պլան մղվեն կամ անգամ անտեսվեն՝ իրենց տեղը զիջելով ազգային սկզբունքին։ Սույն երևույթը նպատակահարմար չէ անվանել վերգաղափարականություն կամ ապագաղափարականություն, քանի որ ազգայնականությունը նույնպես գաղափարախոսություն է, իսկ ազգայինի ջատագովությունը՝ գաղափարականություն։

4. *Գործունեության ոլորտների համընդգրկունություն։* Սույն սկզբունքը ենթադրում է, որ համազգային կառույցը չպետք է սահմանափակվի գործունեության մեկ կամ մի քանի ոլորտներով։ Նրա գործունեության մեջ պետք է ընդգրկված լինեն հայության համար հրատապ հանդիսացող հասարակական կյանքի եթե ոչ բոլոր, ապա գոնե հնարավորինս

շատ բնագավառներ՝ քաղաքական, հոգևոր, մշակութային, գիտական, կրթական, բարեգործական և այլն: Իհարկե, հայ ավանդական կուսակցությունները, ինչպես նաև Հայ Առաքելական, Կաթողիկե և Ավետարանական եկեղեցիներն իրենց ենթակա կառույցների միջոցով, բացի քաղաքական և հոգևոր-եկեղեցական ոլորտներից, գործունեություն են իրականացնում նաև գիտակրթական, բարեգործական, մշակութային, մարզական և այլ ոլորտներում, սակայն դա բավարար չէ նրանց գործունեությունը համընդգրկուն որակելու համար:

5. *Գործունեության աշխարհագրական համընդգրկունություն:* Այս սկզբունքը նշանակում է, որ համազգային կառույցի գործունեությունը պետք է ծավալվի ողջ հայկական սփյուռքի, այսինքն՝ աշխարհի բոլոր երկրների հայ համայնքների վրա: Այլապես համազգային կառույցի գործունեության տարածական սահմանափակումը մեկ երկրի կամ տարածաշրջանի հայ համայնքների շրջանակներում կզրկի նրան համազգային կամ համասփյուռքյան նկարագրից: Գործունեության աշխարհագրական համընդգրկունությունն ապահովելու համար համազգային կառույցը, բացի կենտրոնական գրասենյակից, մասնաճյուղեր պետք է ունենա ամբողջ աշխարհում: Այդ կերպ սփյուռքի համազգային կազմակերպությունը կունենա ցանցային կառույցի բնույթ՝ սփռված մոլորակի այն բոլոր երկրներում, որտեղ կան հայ համայնքներ:

6. *Անկախություն աշխարհի ուժային կենտրոններից։* Իրապես ազգային կառույց լինելու և ազգային շահերին ծառայելու նպատակով համազգային կառույցը պետք է զերծ լինի աշխարհի որևէ գերտերության կամ ուժային կենտրոնի ազդեցությունից։ Ասվածը բնավ չի նշանակում, որ համազգային կառույցը չպետք է համագործակցի կամ շփումների մեջ մտնի աշխարհի գերտերությունների հետ։ Ընդհակառակը, իր առջև դրված խնդիրները լուծելու նպատակով այն, բնականաբար, կարող է համագործակցել աշխարհի տարբեր երկրների, միջազգային կառույցների և քաղաքական այլ սուբյեկտների հետ։

Խոսքն ավելի շուտ վերաբերում է աշխարհի այս կամ այն գերտերության կողմից ստեղծված լինելուն և իր գործունեության մեջ նրա կողմից ուղղորդվելուն։ Սույն հանգամանքը ոչ միայն վտանգավոր է աշխարհի այս կամ այն ուժային կենտրոնի ձեռքում գործիք դառնալու և նրա շահերին (որոնք կարող են չհամընկնել կամ, ավելին՝ հակասել սփյուռքի, Հայաստանի և հայության շահերին) ծառայելու տեսանկյունից, այլև հղի է պառակտիչ ազդեցությամբ, քանի որ, նախ՝ սփյուռքում հայերն ապրում են տարբեր երկրներում, այդ թվում նաև տարբեր գերտերություններում (ԱՄՆ-ում, Ռուսաստանում, ԵՄ երկրներում) և, բացի այդ, նրանք կարող են աշխարհաքաղաքական խնդիրների վերաբերյալ տարբեր մոտեցումներ և տարբեր աշխարհաքաղաքական կողմնորոշումներ ունենալ։

Ուժային կենտրոնների ազդեցությունից սփյուռքի համազգային կառույցը զերծ պահելու տեսանկյունից նպատակահարմար է, որ այն ստեղծվի և նրա կենտրոնական գրասենյակը գտնվի աշխարհի որևէ չեզոք երկրում, օրինակ՝ Շվեյցարիայում, թեև սույն հանգամանքն ինքնին չի երաշխավորում համազգային կառույցի անկախությունը։

Այսպիսով, վերոհիշյալ վեց սկզբունքների հիման վրա համազգային կառույցի ձևավորումը կարող է տեղի ունենալ երկու եղանակով։ Առաջին՝ ներկայում անվանականորեն համազգային կառույց լինելու հավակնություն ունեցող կազմակերպությունները՝ Համաշխարհային հայկական կոնգրեսը և Արևմտահայոց համագումարը, կարող են որդեգրել վերոհիշյալ սկզբունքները որպես իրենց գործունեության հիմք և դրանով իրապես վերածվել համասփյուռքյան կառույցի։ Երկրորդ՝ նոր կառույցի ստեղծում, որի գործունեության հիմքում սկզբից ևեթ դրված կլինեն թվարկված վեց սկզբունքները։ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի հիման վրա նման կառույցի ստեղծման գաղափար հնչեց Հայաստան-սփյուռք 5-րդ համաժողովում ՀՀ նախագահ Ս.Սարգսյանի կողմից։ Առաջարկվեց 2015թ. հիշյալ հանձնաժողովը վերանվանել «Համահայկական խորհուրդ», որը կդառնա համահայկական հրատապ խնդիրների քննարկման մշտական հարթակ։

Սփյուռքի համազգային կառույցը պետք է ունենա իր կազմակերպական կառուցվածքը՝ նախագահ, խորհուրդ և գործադիր մարմին, որոնք շարունակաբար և անմիջականորեն կիրականացնեն կառույցի կառավարումը և գործունեությունը։

Այնուամենայնիվ, համազգային կառույցի գլխավոր կազմակերպական մարմինը, ինչպես բնորոշ է խոշոր կառույցներին ընդհանրապես, պետք է լինի նրա համագումարը, որը պետք է հրավիրվի մի քանի տարին մեկ։ Համագումարի գլխավոր խնդիրներն են լինելու՝ ամրագրել կառույցի գործունեության ռազմավարական նպատակներն ու դրանց հասնելու միջոցները, տալ կառույցի միջնաժամկետ (համագումարների միջև ընկած ժամանակահատվածում) գործունեության ամփոփումը կամ գնահատականը, ուրվագծել հետագա միջնաժամկետ գործունեության ուղենիշները (հստակեցնել մարտավարական նպատակները և դրանց հասնելու ուղիները՝ տարբեր ծրագրեր, միջոցառումներ և այլն), ընտրել կառույցի նախագահ, խորհուրդ և գործադիր մարմին։

Համազգային կազմակերպության կառուցվածքում, հատկապես գործադիր մարմնում, իրենց ուրույն և կարևոր տեղը պետք է ունենան հայության համար հրատապ համարվող հասարակական կյանքի ոլորտներին վերաբերող մասնագիտական հանձնաժողովները՝ քաղաքական, տնտեսա-

կան, բարեգործական, կրթական, մշակութային, մարզական և այլն, որոնք պետք է ունեան իրենց նախագահները և անդամները։

Այս հանձնաժողովները մշտապես պետք է հետևեն իրենց ոլորտներում առկա և առաջացող խնդիրներին, տեղի ունեցող փոփոխություններին և հանդես գան տարբեր խնդիրների լուծման և տարբեր նպատակների իրականացման գործնական առաջարկություններով։ Դրանց գործունեության շնորհիվ համազգային կազմակերպության կառուցվածքային օղակները՝ նախագահը, խորհուրդը և գործադիր մարմինը.

- մշտապես իրազեկված կլինեն հայության համար հրատապ բնագավառներում տեղի ունեցող իրադարձությունների և տիրող իրավիճակի մասին,
- կկարողանան ժամանակին և արդյունավետորեն արձագանքել առաջացող մարտահրավերներին և անգամ կանխել դրանք,
- կկարողանան ճիշտ և արդյունավետ որոշումներ կայացնել ու ծրագրեր կազմել տարբեր նպատակային խնդիրների լուծման ասպարեզում և այլն։

Այս ամենի արդյունքում համազգային կառույցը կդառնա սփյուռքի իշխանությունը, քանի որ նրան բնորոշ կլինեն կառավարական, ներկայացուցչական, օրենսդրական և այլ

գործառույթներ։ Իսկ նման կառույցի առկայության պարագայում.

- էապես կբարձրանա սփյուռքի ինքնակազմակերպման աստիճանը,
- կաճեն նրա գործունեության նպատակամետությունն ու արդյունավետությունը,
- ավելի դյուրին և հստակ կլինեն սփյուռքի հարաբերությունները ինչպես մայր հայրենիքի, այնպես էլ այլ երկրների և կազմակերպությունների հետ։

Համադաշնային մոդել

Այս մոդելի մշակման համար հիմք է վերցվել սփյուռքի ինքնակազմակերպման հունական փորձը: Այն հիմնված է բազմաստիճան (քառաստիճան) կոնֆեդերալիզմի (համադաշնայնության) սկզբունքի վրա, որտեղ.

1. *Առաջին* աստիճանի վրա գտնվում են տեղական համայնքները և կազմակերպությունները, որոնք գործում են տվյալ երկրի որևէ քաղաքի կամ վարչատարածքային միավորի (մարզ, նահանգ, շրջան և այլն) շրջանակներում:
2. *Երկրորդ* աստիճանի վրա գտնվում են տեղական համայնքների և հաստատությունների ֆեդերացիաները (դաշնությունները), որոնք իրենց գործունեությունը ծավալում են տվյալ երկրում՝ համապետական մակարդակով:
3. *Երրորդ* աստիճանի վրա տարբեր տարածաշրջանների երկրների հունական համայնքների համադաշնություններն են, որոնք գործում են միջազգային՝ տարածաշրջանային մակարդակով: Այդ տարածաշրջանները 7-ն են. Կանադա, ԱՄՆ[71], Կենտրոնական և Հարավային Ամերիկա, Եվրոպա, հետխորհրդային տարածք, Օկեա-

[71] Չնայած ԱՄՆ-ը և Կանադան ոչ թե տարածաշրջաններ, այլ առանձին երկրներ են, այնուամենայնիվ, հաշվի առնելով այդ երկրների մեծության, դրանցում հունական համայնքների ստվարաթվության, այդ երկրների միջազգային դերի ու կշռի և այլ գործոնների համադրությունը՝ դրանք դիտվում են որպես տարածաշրջաններ:

նիա և Հեռավոր Արևելք, Աֆրիկա և Մերձավոր ու Միջին Արևելք:

4. Եվ վերջապես, *չորրորդ* աստիճանի վրա է գտնվում Արտերկրի հույների խորհուրդը (*The Council of Hellenes Abroad*), որն աշխարհի մակարդակով միավորում է վերոհիշյալ կառույցներին՝ հանդիսանալով նրանց ընդհանուր «հովանոցը»: Սույն կազմակերպությունը խորհրդակցական մարմին է Հունաստանի Հանրապետության հետ հարաբերություններում և ներկայացնում է հունական սփյուռքը (արտահայտում է վերջինիս կարծիքը)[72]:

Հունական սփյուռքի ինքնակազմակերպման մոդելն ուշագրավ է նրանով, որ մի կողմից՝ աստիճանակարգային (հիերարխիկ) կառուցվածքի հիման վրա միավորում է բոլոր համայնքներն ու հաստատությունները՝ ապահովելով միասնական կառավարման կենտրոն, իսկ մյուս կողմից՝ առանձին համայնքներն ու հաստատությունները պահպանում են իրենց ինքնուրույնությունը, քանի որ միավորումը հիմնված է համադաշնության սկզբունքի վրա: Այլ կերպ ասած՝ հունական սփյուռքի պարագայում առկա է ապակենտրոնացված միավորման մոդելը, որը հիմնված է «բազմազանություն միասնության մեջ» սկզբունքի վրա:

[72] Greek Diaspora and the General Secretariat for Greeks Abroad, http://www.ggae.gr/frontoffice/portal.asp?cpage=node&cnode=16&clang=1

Հայկական սփյուռքի պարագայում մինչ այժմ եղել են դաշնային կամ համադաշնային հիմունքներով միավորման որոշ տարրեր: Դա հատկապես բնորոշ է եվրոպական երկրների հայ համայնքներին: Օրինակ՝ Ֆրանսիայի հայկական կազմակերպությունների համակարգող խորհուրդը (ՖՀԿՀԽ) կամ Շվեդիայի հայկական միությունների համակարգող մարմինը (ՇՀՄՀՄ) կարելի է դիտել որպես այդ երկրների հայկական կազմակերպությունների համադաշնություն: Հոլանդահայ կազմակերպությունների ֆեդերացիայի (ՀՀԿՖ) անվանումն ավելի է համապատասխանում դաշնայնության սկզբունքին: ՌԴ-ում նման գործառույթ է իրականացնում Ռուսաստանի հայկական կազմակերպությունների համակարգող խորհուրդը (ՌՀԿՀԽ): Տարածաշրջանային մասշտաբով հայկական կազմակերպությունները միավորող կառույց է Եվրոպայի հայկական միությունների ֆորումը (ԵՀՄՖ), որի նպատակն է «պայմաններ ստեղծել Եվրոպայի հայկական կազմակերպությունների միջև մշտական հաղորդակցություն ապահովելու, համագործակցություն հաստատելու և ամրապնդելու, համատեղ խնդիրներ ու ծրագրեր քննարկելու և դրանք միասնաբար լուծելու համար»[73]:

Մի կողմից՝ վերոհիշյալ կառույցները միավորում են Ֆրանսիայի, Շվեդիայի, Հոլանդիայի, ավելի լայն մասշտաբով՝ Եվրոպայի հայկական կազմակերպությունները և հա-

[73] «Հայ սփյուռք» հանրագիտարան,Եր., «Տիգրան Մեծ», 2003, էջ 661:

մակարգում նրանց գործունեությունը, մյուս կողմից՝ յուրաքանչյուր հայկական կազմակերպություն ինքնուրույն է և պահպանում է անկախ գործելու հնարավորությունները: Դրա լավագույն վկայությունը դրսևորվեց Ֆրանսիայի վերջին նախագահական ընտրությունների գործընթացում, երբ ՖՀԿՀԽ-ն և Ֆրանսիայի Հայ դատի հանձնախումբը միմյանցից անկախ արտահայտեցին իրենց դիրքորոշումն այդ ընտրությունների կապակցությամբ՝ սատարելով Էմանուել Մակրոնի թեկնածությունը[74] (վերջինս քվեարկության արդյունքներով ընտրվեց Ֆրանսիայի նախագահ):

Վերոհիշյալ օրինակները, սակայն, դաշնային/համադաշնային հիմունքներով սփյուռքի միավորման միայն առանձին դեպքեր կամ տարրեր են: Իսկ առհասարակ, որևէ մոդելով ողջ հայկական սփյուռքի ինստիտուցիոնալ միավորման խնդիրը, չնայած սփյուռքի ավելի քան հարյուրամյա գոյությանը, դեռևս շարունակում է մնալ օրակարգային:

Մինչդեռ հունական սփյուռքի ինքնակազմակերպման համադաշնային մոդելը կարող է կիրառելի լինել տեղայնացման համար: Հայկական սփյուռքի պարագայում նույնպես այն կարող է լինել քառաստիճան, որի.

- *Առաջին աստիճանում* կլինեն որևէ երկրի տարբեր քաղաքների կամ շրջանների հայ համայնքները: Սփյուռքի ինքնակազմակերպման այս ինստիտուցիոնալ «բջիջնե-

[74] Տե՛ս ՀՅԴ-ն Ֆրանսիայում կաջակցի Մակրոնին, http://www.1in.am/2135643.html

ը» կարելի է կոչել տվյալ քաղաքի կամ շրջանի անունով։ Օրինակ՝ «Հալեպի հայ համայնք»։

- *Երկրորդ աստիճանում* կլինեն այդ համայնքների դաշնությունները՝ տվյալ պետության մակարդակով։ Այս դեպքում ինստիտուցիոնալ կառույցը կարելի է կոչել տվյալ երկրի անունով։ Օրինակ՝ «Սիրիայի հայ համայնք», «Սիրիայի հայ համայնքների միություն» կամ «Սիրիայի հայերի միություն»։
- *Երրորդ աստիճանում* կլինեն այդ դաշնությունների կոնֆեդերացիաները՝ տարածաշրջանային մակարդակով։ Այս դեպքում ինստիտուցիոնալ կառույցը կարելի է կոչել տվյալ տարածաշրջանի անունով։ Օրինակ՝ «Մերձավոր և Միջին Արևելքի հայ համայնքների միություն»։ Ի տարբերություն հունական սփյուռքի՝ հայկականի պարագայում տարածաշրջանային համադաշնությունները կարելի է ձևավորել հետևյալ կերպ. ա) Հյուսիսային Ամերիկա և Ավստրալիա[75], բ) Հարավային կամ Լատինական Ամերիկա, գ) Եվրոպա, դ) հետխորհրդային երկրներ, ե) Մերձավոր և Միջին Արևելք, զ) Հեռավոր Արևելք։

[75] Նկատի ունենալով, որ Ավստրալիան ԱՄՆ-ի և Կանադայի հետ միասին գտնվում է միևնույն՝ անգլոսաքսոնական քաղաքակրթական տիրույթում։ Նույն հիմնավորմամբ՝ սկզբունքորեն այս տարածաշրջանի մեջ կարելի է ներառել նաև Մեծ Բրիտանիայի հայ համայնքը՝ եվրոպական տարածաշրջանի մեջ թողնելով միայն մայրցամաքային Եվրոպայի երկրների հայ համայնքները։

- Եվ վերջապես, *չորրորդ աստիճանում* կլինի վերոհիշյալ համադաշնությունները միավորող համաշխարհային մարմինը, որը պայմանականորեն կարելի է կոչել «Սփյուռքահայերի խորհուրդ» կամ «Արտերկրի հայերի խորհուրդ» (ինչպես ընդունված է այլ ժողովուրդների, մասնավորապես՝ հունական, ռուսական և այլ սփյուռքերի պարագայում)։

Համադաշնային հիմունքներով հայկական սփյուռքի միավորման որոշ դրսևորումների մասին խոսվեց վերը։ Այնուամենայնիվ, դրա լավագույն օրինակը տալիս է Հայ Ավետարանական եկեղեցին՝ որպես համազգային կառույց։ Վերջինս չունի միասնական նվիրապետություն։ Փոխարենն ունի հինգ տարածաշրջանային միություններ (Մերձավոր Արևելքի Հայ Ավետարանական եկեղեցիների միություն, Ֆրանսիայի և Եվրոպայի Հայ Ավետարանական Միություն, Հյուսիսային Ամերիկայի Հայ Ավետարանական Միություն, Հայաստանյայց Ավետարանական եկեղեցու Միություն, Եվրասիայի Հայ Ավետարանական Միություն), որոնք ներառում են համապատասխան տարածաշրջանների հայ ավետարանական եկեղեցիները։ Որպես հիշյալ տարածաշրջանային միությունների գործունեությունը համակարգող ինստիտուցիոնալ մարմին 1978-ից գործում է Հայ Ավետարանական համաշխարհային խորհուրդը[76]։

[76] Տե՛ս Հայաստանյայց Ավետարանական եկեղեցու կայք, http://eca.am/about/who-we-are01

Այնպես որ, սփյուռքի ինքնակազմակերպման համադաշնային մոդելը՝ տարածքային սկզբունքով, հայ իրականության պարագայում լիովին անծանոթ երևույթ կամ նորություն չէ։ Դրա համար արդեն իսկ կա որոշակի փորձ։

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Առաքելյան Հ.,* Ռամկավար ազատական կուսակցության դերակատարությունը 1946-1948թթ. հայրենադարձության կազմակերպման գործընթացում, «1946-1948թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր» համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., Լիմուշ, 2009:
2. *Էլիէճեան Կ.,* Հայրենադարձությունը և ՍԴՀԿ-ի դերակատարությունը, «1946-1948թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր» համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., Լիմուշ, 2009:
3. *Խատիսեան Ալ.,* Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Բ. տպագրութիւն, Պէյրութ, տպարան «Համազգային», 1968:
4. *Հակոբյան Հ.Վ.,* Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական ու իրավական հիմքերը, Եր., «Ասողիկ», 2002:
5. *Հարությունյան Գ., Սիմավորյան Ա., Հովյան Վ., Ղանալանյան Տ.*, Սփյուռքի գիտավերլուծական հանրությունը, կազմակերպչական խնդիրներ և համագործակցության հեռանկարներ, Երևան, 2013:

6. *Հարությունյան Լ.,* Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Զ. Չորեքչյանի դերակատարությունը 1946-1948թթ. հայրենադարձության կազմակերպման գործում, «1946-1948թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր» համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., Լիմուշ, 2009։
7. *Հովյան Վ.,* ԱՄՆ հայ համայնքի գիտական ներուժի շուրջ, «Գլոբուս», թիվ 7 (86), 2017։
8. *Հովյան Վ.,* Հայաստան-սփյուռք երրորդ խորհրդաժողով. նախնական ամփոփում, Երկիր, 3-ը նոյեմբերի, 2006։
9. *Ղանալանյան Տ.,* Հումանիտար ոլորտի գիտավերլուծական հանրությունը սփյուռքահայ համայնքներում. պատկերի ուրվագիծ, «Գլոբուս» վերլուծական հանդես, թիվ 11, 2013։
10. *Մելիքյան Վ.,* Արևմտահայերի համագումարները և հայկական հարցի փուլերը 1917-1923թթ., Եր., «Զանգակ-97», 2007։
11. *Մելքոնյան Էդ.,* Հայկական բարեգործական ընդհանուր միությունը 1946-1948թթ. հայրենադարձության գործընթացում, «1946-1948թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր» համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., Լիմուշ, 2009։
12. *Նահապետյան Հ., Վերանյան Կ., Սիմավորյան Ա., Ղանալանյան Տ.,* Հայ համայնքն ԱՄՆ-ում, Երևան, 2010։

13. *Պողոսյան Վ., Դավթյան Ա.,* 1946-1948թթ. հայրենադարձությունը և Հայ Առաքելական եկեղեցու գործունեությունը, «1946-1948թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր» համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., Լիմուշ, 2009։
14. *Սաղաթելյան Ի.,* 1946-1948թթ. հայրենադարձությունը և Հայ հեղափոխական դաշնակցությունը, «1946-1948թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր» համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., Լիմուշ, 2009։
15. *Սիմավորյան Ա., Հովյան Վ., Ղանալանյան Տ.,* Արտերկրի հայագիտական կենտրոնները. ներուժի գնահատում, Երևան, 2014։
16. *Սիմավորյան Ա., Հովյան Վ., Վերանյան Կ.,* Իսրայելի, Իրանի, Թուրքիայի, Ադրբեջանի քաղաքականությունը սփյուռքի նկատմամբ, Եր., «Հայկարլի», 2017։
17. *Վրացյան Ս.,* Հայաստանի Հանրապետություն, Եր., «Հայաստան», 1993։
18. *Տեր-Պետրոսյան Լ.,* Ընտրանի. ելույթներ, հոդվածներ, հարցազրույցներ, Եր., «Փրինթինֆո», 2006։
19. Գերմանիոյ մէջ քրտական ծագումով երեսփոխանին որոշումը՝ Հայոց ցեղասպանութեան նիւթին շուրջ, Նոր Մարմարա, 31-ը մարտի, 2018։
20. «Հայ սփյուռք» հանրագիտարան, Եր., «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2003։

21. Հայաստան-սփյուռք վեցերորդ համաժողովի ծրագիր, Երևան, 2017:
22. Հայկական սփյուռք: Տարեգիրք, Եր., «Պոլիգրաֆ բիզնես», 2009:
23. «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Եր., «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2002:
24. *Артюхин М., Мееровская О.,* Научная диаспора как ресурс развития белорусской науки, Социологический альманах, Выпуск № 3, 2012.
25. *Дежина И.,* Научно-образовательные центры и лаборатории: государственные меры и успешные практики, Журнал, Экономико-политическая ситуация в России, Номер 5, 2012.
26. *Дежина И.,* Развитие сотрудничества с русскоязычной научной диаспорой: опыт, проблемы, перспективы, доклад, № 23, Москва, 2015.
27. *Душина С.А., Ащеулова Н.А., Ломовицкая В.М.,* Модели взаимодействия стран-доноров с научной диаспорой: от возвращения к сотрудничеству, Наука та наукознавство, № 3, 2012.
28. *Егерев С.,* Диалоги с диаспорой, Отечественные записки, N 7(8), 2002.
29. *Имамутдинов И., Костина Г., Медовников Д., Механик А., Оганесян Т., Розмирович С., Рубан О., Савеленок Е., Точенов А.,* Исследование российской научно-технологичес-

кой диаспоры в развитых странах: условия и возможности возвращения научных кадров и использование потенциала, Москва, Инновационное бюро «Эксперт», 2009.

30. *Кртян Л.,* Особенности институциональной структуры армянской диаспоры Франции, Международные отношения. Политология. Регионоведение, Вестник Нижегородского университета им. Н.И. Лобачевского, № 6, 2010.
31. *Chaparro F., Jaramillo H., Quintero V.,* Promise and Frustration of Diaspora Networks: Lessons from the Network of Colombian Researchers Abroad», Diaspora Networks and the International Migration of Skills: How Countries Can Draw on Their Talent Abroad, World Bank Institute Development Studies, 2006.
32. *Sassounian H.,* Azerbaijan Organizes its Own Diaspora To Compete With the Armenian Diaspora, The California Courier, July 24, 2018.
33. *Simavorian A.,* La diáspora, como potencial para el país: la experiencia internacional, «Sardarabad», Miércoles 12 de marzo de 2014.
34. *Tejada, G., Varzari, V., Porcescu, S.*, Scientific diasporas, transnationalism and home-country development: Evidence from a study of skilled Moldovans abroad. Journal of South East European and Black Sea Studies 13 (2), 2013.

Համացանցային աղբյուրներ

1. Ամերիկահայ ճարտարագետների և գիտնականների ընկերակցությունը նյութատեխնիկական աջակցություն է տրամադրել ՀՀ բնապահպանության նախարարությանը, https://www.aysor.am/am/news/2017/01/19/աջակցություն/1197692
2. Արգենտինայի Գիտության, տեխնոլոգիայի և արտադրական նորարարությունների նախարարության կայք, http://www.raices.mincyt.gov.ar/
3. ԱՐՓԱ ինստիտուտի կայք, http://www.arpainstitute.org/.
4. ԱՐՓԱ հիմնարկի նորարարության մրցույթ, http://arpainstitute.org/wp-content/uploads/2016/10/ARPA_Invention_Criteria_Arm_13.pdf
5. Գիտաժողով՝ նվիրված ԳՊՀ պատվավոր բարերար Ժիրայր Նիշանյանի ծննդյան 80-ամյա հոբելյանին, http://gsu.am/wp content/uploads/2017/07/gsu_annual_conference_program_19.pdf
6. Էրդողանն անձամբ է հրահանգել Հայոց ցեղասպանության բանաձևի դեմ Բեռլինում ցույցեր կազմակերպել. Der Spiegel-ի բացահայտումը, https://armenpress.am/arm/news/927788/turkeyE28099s-erdogan-personally-ordered-to-organize-protests-in-berlin-against-armenian-genocide-recognition.html
7. «Ինժեներական քաղաք»-ի ստեղծման հայեցակարգ http://www.irtek.am/views/act.aspx?aid=94066

8. Ծրագիր հայ գիտնականների ներուժի համախմբման, https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2009/04/09_0459.pdf
9. Համահայկական հիմնադրամի կայք, http://www.himnadram.org/index.php?id=24162&lang=2
10. Համահայկական գիտական համաժողով, http://yba.am/hy/համահայկական-գիտական-համաժողով/
11. Համաշխարհային հայկական կոնգրեսը և Ռուսաստանի հայերի միությունը, ՀՀ Սփյուռքի նախարարության հետ համատեղ, հայտարարում են 2013թ. ստեղծագործական և գիտական աշխատանքի միջազգային մրցանակաբաշխություն, http://hayernaysor.am/
12. Հայաստանի Հանրապետության կառավարության նիստի արձանագրությունից քաղվածք, http://www.irtek.am/views/act.aspx?aid=56084
13. Հայաստանի հանրային հեռուստատեսության «Օրակարգ» ծրագրի 2018թ. մայիսի 27-ի թողարկումը, https://www.youtube.com/watch?v=PubW66jRsj0
14. Հայաստանյայց Ավետարանական եկեղեցու կայք, http://eca.am/about/who-we-are01
15. Հայաստանում գիտության ֆինանսավորումը ամենացածրներից մեկն է Եվրոպայում, http://www.7or.am/am/news/view/55633/
16. ՀՀ նախագահի պաշտոնական կայք, http://www.president.am/hy/president-awards/

17. ՀՅԴ-ն Ֆրանսիայում կաջակցի Մակրոնին, http://www.1in.am/2135643.html
18. Հրեական համաշխարհային կոնգրեսի կայք, http://www.worldjewishcongress.org/en/about
19. Մեկնարկեց Երկրորդ համահայկական գիտական համաժողովը, http://www.erit.am/news/hy/79002
20. Ներուժ ծրագրի կայք, http://neruzh.am/
21. Սփյուռք ամառային դպրոցի կայք, http://www.dss.am/am/About-us-About-program
22. Սփյուռքահայ գիտնականների ասոցիացիայի կայք, http://test.asdaworld.com/
23. Օտարերկրյա պետությունների հայազգի գիտնականների ցուցակ՝ ըստ գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառների, http://scs.am/files/otarerkrya_hay_gitnakanner.pdf
24. 5000-ական դոլար տրվեց Հայաստանում աշխատող 32 գիտական խմբերին, «168 ժամ», http://168.am/2016/01/27/587677.html
25. Диаспора в инновационных системах, http://www.ng.ru/nauka/2011-01-26/9_diaspora.html
26. *Кангас С.,* Чикагские мальчики и чилийское экономическое чудо, http://scepsis.net/library/id_557.html.
27. Первая Всероссийская конференция Ассоциации врачей Союза армян России, http://sarinfo.org/msg/13-10-14.shtml
28. Activités de l'UMAF en Arménie,

http://www.umaf.fr/index.php?category/Presentation-umaf/Activites-umaf-en-armenie

29. Armenian Engineers and Scientists of America 32nd Anniversary Celebration, http://asbarez.com/140454/armenian-engineers-and-scientists-of-america-32nd-anniversary-celebration/
30. Armenia Fund, Glendale Adventist Conclude Successful 2nd Mission to Armenia, http://en.hayernaysor.am/english-armenia-fund-glendale-adventist-conclude-successful-2nd-mission-to-...
31. Armenian EyeCare Project Kicks Off 25th Anniversary, http://en.hayernaysor.am/english-armenian-eyecare-project-kicks-off-25th-anniversary/
32. Association Internationale, http://www.ararat-academy.org/association.html
33. Bertha & John Garabedian Foundation Grant Renewed http://armenianstudies.csufresno.edu/hye_sharzhoom/vol21/may70/bertha.htm
34. Center of Excellence for the Prevention of Childhood Blindness: Saving Thousands of Babies from Blindness, https://eyecareproject.com/video/center-of-excellence-i/
35. Greek Diaspora and the General Secretariat for Greeks Abroad, http://www.ggae.gr/frontoffice/portal.asp?cpage=node& cnode=16&clang=1
36. Groupement Interprofessionnel International Arménien, https://www.ffa-int.org/wp-content/uploads/17-28-2.pdf

37. Manoogian Simone Foundation gives $1.2 million for Armenian studies, http://www.ur.umich.edu/0708/Nov19_07/24.shtml
38. Mobile Eye Hospital: What weighs 14 tons and restores eyesight?, https://eyecareproject.com/video/mobile-eye-hospital/
39. 2012-2013 Akian Foundation Scholarship Programs at American University of Armenia, Armenia, http://scholarship-positions.com/2012-2013-akian-foundation-scholarship-programs-at-american-university-of-armenia-armenia/2012/06/12/
40. Regional Eye Clinics: Five Clinics for $5 Million, https://eyecareproject.com/video/5-million-for-5-aecp-regional-clinics/

ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով աշխատանքը՝ հարկ ենք համարում ընդհանրացնել դրա հիմնական արդյունքները։ Հայրենիք-սփյուռք համագործակցության մոդելները կարելի է դասակարգել ըստ հարաբերությունների բնույթի և ձևի։

Առաջին դեպքում հարաբերությունները լինում են ուղղահայաց և հորիզոնական։ Ուղղահայաց հարաբերությունները բնորոշ են համեմատաբար երիտասարդ սփյուռք ունեցող պետություններին, որոնք իրականացնում են սփյուռքակերտման քաղաքականություն՝ ստեղծելով և ղեկավարելով սփյուռքյան կառույցներ։ Հորիզոնական հարաբերությունները բնորոշ են այն պետություններին, որոնք ունեն ավանդական սփյուռք, ինչպիսիք են Հայաստանը, Հունաստանը, Իսրայելը և այլն։ Այս դեպքում արդեն իսկ գոյություն ունեցող սփյուռքյան կառույցների հետ պետությունը ձևավորում է հավասար և փոխշահավետ հարաբերություններ։

Երկրորդ դեպքում հայրենիք-սփյուռք հարաբերություններն ունեն երկու մոդել, որոնք պայմանականորեն կարելի է անվանել «միասնական ջանք» և «միասնական օրակարգ»։

«Միասնական ջանք» մոդելի դեպքում առաջ են քաշվում նախագծեր, որոնց իրականացման համար կատարվում է նաև դերերի և գործառույթների բաշխում: Այլ կերպ ասած՝ միասնական նախագծի միջոցով պետական և սփյուռքյան կառույցները բերվում են մեկ հարկի տակ:

«Միասնական օրակարգ» մոդելի դեպքում առաջ է քաշվում ընդհանուր գաղափար, որի իրականացման շրջանակներում ենթադրվող գործողությունները թողնվում են առանձին կառույցների կամ անհատների հայեցողությանը: Այսինքն՝ յուրաքանչյուր հաստատություն կամ անհատ ինքն է որոշում իր քայլերն առաջադրված օրակարգի իրականացման նպատակով:

Տեսականորեն առկա է որոշակի համահարաբերակցություն հիշյալ երկու չափանիշներով դասակարգմամբ առանձնացված մոդելների միջև: «Միասնական ջանք» մոդելն ավելի շատ համապատասխանում է պետություն-սփյուռք ուղղահայաց, իսկ «միասնական օրակարգը»՝ հորիզոնական գործակցությանը: Հայ իրականության մեջ պետություն-սփյուռք գործակցության «միասնական օրակարգի» ձևավորման լավագույն հարթակ կարող են դառնալ հայրենիք-սփյուռք համաժողովները, որոնց ընթացքում պետք է, մի կողմից, ներկայացվի հաշվետվություն նախորդ համաժողովում հռչակված գաղափար(ներ)ի իրականացման ուղղությամբ ձեռնարկված քայլերի մասին, մյուս կողմից՝ նախանշվի նոր գա-

ղափարը՝ մինչև հաջորդ խորհրդաժողովն ընկած ժամանակահատվածում իրականացման համար։

Պետություն-սփյուռք գործակցության կարևոր ուղղություններից է գիտակրթական ոլորտը, որը ենթադրում է աշխատանք արտերկրի մասնագիտական ներուժի հետ։ Հայ իրականության մեջ սույն խնդիրը կարևորվում է գիտության ասպարեզում մի շարք մարտահրավերներով, ինչպիսիք են ոլորտի թերֆինանսավորումը, «ուղեղների արտահոսքը», գիտության դերակատարության փոփոխությունը ԽՍՀՄ փլուզումից հետո և նախկին խորհրդային երկրների հետ գիտական կապերի անկումը։

Հայաստանի անկախացումից հետո սփյուռքի տարբեր կազմակերպություններ իրենց նպաստը բերեցին ծանր վիճակում հայտնված հայրենիքի գիտական համակարգի պահպանման և զարգացման գործում։ Դա դրսևորվեց.

- նոր գիտակրթական հաստատությունների ստեղծմամբ, ինչպիսիք են Հայաստանի ամերիկյան համալսարանը, Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցը,
- գիտական աշխատանքները կանոնավոր կերպով խրախուսող հիմնադրամների գործունեությամբ, ինչպիսին է, օրինակ, «Ռոբերտ Պողոսյան» հիմնադրամը,
- գիտական հաստատությունների շենքերի պայմանների բարելավմամբ, դրանց ժամանակակից սարքավորումներով ապահովմամբ և այլն։

Գիտական սփյուռքի հետ համագործակցության համատեքստում կարևոր նշանակություն ունի արտերկրի հայության մասնագիտական ներուժի համախմբումը։ Այս նպատակով ստեղծվել և գործում են ինչպես տեղական, այնպես էլ համասփյուռքյան ցանցային կառույցներ (միություններ, ընկերակցություններ, մասնագետներին համախմբող նախագծեր և այլն)։ Կարևոր նշանակություն ունի նաև տարբեր մասնագիտություններով (հայագետներ, քաղաքագետներ, իրավաբաններ, բժիշկներ, ճարտարապետներ և այլն) համահայկական համաժողովների անցկացումը, որի գլխավոր նպատակն է մեկ հարկի տակ միավորել Հայաստանի և սփյուռքի համապատասխան ոլորտի մասնագետներին, իրականացնել փորձի և գիտելիքների փոխանակում, ապահովել կայուն և պարբերական կապ վերջիններիս միջև։

Սփյուռքի մասնագիտական ներուժը համախմբող ցանցային կառույցների գործունեությունը Հայաստանի համար, գիտականից բացի, ունեցել է նաև սոցիալական (օրինակ՝ առողջապահական), տնտեսական (օրինակ՝ էներգետիկ) բնապահպանական և այլ նշանակություններ։

Արտերկրի հայրենակիցների մասնագիտական ներուժի համախմբման և հայրենիք-սփյուռք գիտակրթական կապերի խթանման համատեքստում կարևոր նշանակություն են ունեցել ՀՀ կառավարության որոշմամբ ընդունված նորմատիվային փաստաթղթերը, մասնավորապես՝ Հայ գիտնա-

կանների ներուժի համախմբման (2009թ.) և Հայկական սփյուռքի՝ գիտական, կրթական, տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում առկա ներուժի հաշվառման մեխանիզմների ու տվյալների միասնական համակարգի ստեղծման (2010թ.) ծրագրերը: Հիշյալ փաստաթղթերում մատնանշված են ռազմավարական նպատակները, գործողությունների ճանապարհային քարտեզը և ակնկալվող արդյունքները: Ծրագրերի իրականացման գործում ներգրավված են ինչպես տարբեր գերատեսչություններ, այնպես էլ ակադեմիական և բուհական շրջանակներ:

Հետազոտության եզրակացությունն այն է, որ հայրենիք-սփյուռք գիտական կապերը հիմնված են *ապակենտրոնացված մոդելի* վրա, որը համապատասխանում է վերը հիշատակված հորիզոնական մոդելին:

Սփյուռքի ինքնակազմակերպման տեսանկյունից շարունակում է օրակարգային մնալ արտերկրի ողջ հայությանը միավորող և այն ներկայացնող համազգային կազմակերպչական կառույցի ձևավորումը: Սույն խնդրի լուծման համար կարելի է կիրառել երկու մոդել: Առաջինը պայմանականորեն կարելի է անվանել *միատարր մոդել,* որն առավելապես հիմնված է սփյուռքի տարբեր կառույցների և շերտերի միավորման գաղափարի վրա: Այս մոդելի դեպքում նպատակահարմար է, որ արտերկրի հայության համախմբումը մեկ կառույցի միջոցով հիմնված լինի հետևյալ սկզբունքների

վրա՝ լայն ներկայացուցչականություն, վերկուսակցականություն, վերդավանականություն, գործունեության ոլորտների և աշխարհագրության համընդգրկունություն, անկախություն աշխարհի ուժային կենտրոններից։

Երկրորդը պայմանականորեն կարող ենք անվանել *համադաշնային մոդել*։ Այն հունական փորձի տեղայնացումն է և հիմնված է տարածքային սկզբունքով արտերկրի հայրենակիցների միավորման գաղափարի վրա։ Հայկական սփյուռքի դեպքում ինքնակազմակերպումը կարող է լինել *քառաստիճան համադաշնության մոդելով,* որի առաջին աստիճանում կլինեն որևէ երկրի առանձին քաղաքների կամ շրջանների հայ համայնքները, երկրորդ աստիճանում՝ համապետական մակարդակով տեղական համայնքները միավորող դաշնությունները, երրորդ աստիճանում՝ տարածաշրջանային մակարդակով առանձին պետությունների հայ համայնքները միավորող համադաշնությունները, իսկ չորրորդ աստիճանում՝ այդ տարածաշրջանային համադաշնությունները միավորող Սփյուռքահայերի կամ արտերկրի հայերի խորհուրդը։

Հետազոտության մեջ հիշատակված մոդելները և համագործակցության ուղիները չեն հավակնում լինել վերջնական և սպառիչ, ինչը ենթադրում է, որ կարող են մշակվել նաև հայրենիք-սփյուռք փոխգործակցության նոր՝ ինչպես համընդգրկուն, այնպես էլ ոլորտային ձևաչափեր։

РЕЗЮМЕ

В завершение нашего исследования считаем нужным обобщить его основные результаты. Модели сотрудничества родина-диаспора можно классифицировать по типу и формату отношений.

В первом случае отношения бывают вертикальными и горизонтальными. Вертикальные отношения характерны для государств со сравнительно молодой диаспорой, осуществляющих политику формирования диаспоры, создавая диаспоральные структуры и руководя ими. Горизонтальные отношения присущи государствам, у которых есть традиционные диаспоры, – таким как Армения, Греция, Израиль и др. В этом случае государство формирует равноправные и взаимовыгодные отношения с уже существующими диаспоральными структурами.

Во втором случае отношения родина-диаспора выстроены по двум моделям, которые условно можно назвать «единое усилие» и «единая повестка». При модели «единое усилие» выдвигаются проекты, для осуществления которых распределяются соответствующие роли и функции. Иными словами, по-

средством общего проекта государственные и диаспоральные структуры сводятся воедино.

При задействовании модели «Единая повестка» выдвигается общая идея, предполагаемые действия по реализации которой оставляются на усмотрение отдельных структур или частных лиц. То есть каждое учреждение или индивид сами определяют свои шаги, нацеленные на реализацию предложенной повестки.

Теоретически есть определенная соотнесенность между моделями, выделенными по двум упоминавшимся классификациям. Модель «единое усилие» в большей степени соответствует вертикальному, а «единая повестка» – горизонтальному типу взаимодействия государства и диаспоры. В армянской действительности наилучшей площадкой для формирования «единой повестки» взаимодействия государства и диаспоры могут стать форумы в формате государство-диаспора, в ходе которых нужно, с одной стороны, отчитаться о шагах, предпринятых для реализации идеи(й), озвученных в ходе предыдущего форума, с другой – обозначить новую идею для реализации в период до следующего форума.

Одно из важных направлений взаимодействия государство-диаспора – научно-образовательная сфера, предполагающая работу с профессиональным потенциалом зарубежья. В армянской действительности важность этой задачи обусловле-

на рядом вызовов, в том числе недостаточным финансированием данной сферы, «утечкой мозгов», изменением роли и значения науки после развала СССР и пресечение научных связей с другими постсоветскими странами.

После суверенизации Армении разные организации диаспоры внесли свой вклад в процесс сохранения и развития научной системы нашей родины, оказавшейся в тяжелой ситуации. Это проявилось в:

- создании новых научно-образовательных учреждений, каковыми являются Американский университет Армении, Севанская духовная семинария «Вазгенян»;
- деятельности фондов, на регулярной основе поощряющих научные исследования, например, фонда «Роберт Погосян»;
- улучшении условий в зданиях научнух учреждений, оснащении ими современным оборудованием и т.д.

Важное значение в контексте научного сотрудничества с диаспорой имеет консолидация профессионального потенциала зарубежных армян. Для этого созданы и действуют как местные, так и общедиаспоральные сетевые структуры (союзы, товарищества, консолидирующие специалистов проекты и т.д.). Важное значение имеет также проведение общеармянских конференций для разных специалистов (арменоведов, политологов, юристов, врачей, архитекторов и

т.д.), главная цель которых – объединить под одной крышей специалистов соответствующей сферы из Армении и диаспоры, осуществить обмен опытом и знаниями, обеспечить стабильную и периодическую связь между ними.

Деятельность сетевых структур, консолидирующих профессиональный потенциал диаспоры, помимо собственно научного значения, обладает также социальной (например, в сфере здравоохранения), экономической (например, в сфере энергетики), экологической и иной значимостью. Важное значение в контекте консолидации профессионального потенциала наших зарубежных соотечественников и стимулирования научно-образовательных связей родина-диаспора имели принятые по решению правительства РА нормативные документы – в частности, программы Консолидации потенциала армянских ученых (2009г.) и программы по разработке механизмов учета существующего потенциала в научной, образовательной, экономической, культурной и других сферах армянской диаспоры и созданию единой базы данных (2010г.). В упомянутых документах отмечены стратегические цели, дорожная карта действий и ожидаемые результаты. В осуществление этих программ вовлечены как разные ведомства, так и академические и вузовские круги.

Вывод нашего исследования заключается в том, что научные связи родина-диаспора опираются на *децентрализован-*

ную модель, которая соответствует упоминавшейся выше горизонтальной модели.

С точки зрения самоорганизации диаспоры продолжает оставаться актульным формирование общенациональной организационной структуры, объединяющей и представляющей всех зарубежных армян. Для решения этой задачи можно использовать две модели. Первую можно условно назвать *гомогенной моделью*, которая преимущественно опирается на идею объединения разных структур и страт диаспоры. При такой модели целесообразно, чтобы консолидация зарубежных армян при помощи одной структуры опиралась бы на следующие принципы: широкая представительность, надпартийность, надконфессиональность, всеобъемлющий охват сфер деятельности и географии, независимость от силовых центров мира.

Вторую можно условно назвать *конфедеративной моделью*. Эта модель – локальная адаптация греческого опыта, и она основана на идее объединения зарубежных соотечественников по территориальному признаку. В случае армянской диаспоры самоорганизация может происходить в рамках модели *четырехступенчатой конфедерации*, первой ступенью которой были бы армянские общины отдельных городов или областей какой-либо страны, второй ступенью – федерации, объединяющие местные общины на общегосударственном

уровне, третьей ступенью – конфедерации, объединяющие армянские общины отдельных государств, а четвертой – Совет зарубежных армян, объединяющмй эти региональные конфедерации.

Упоминаемые в исследовании модели и пути сотрудничества не претендуют на то, что являются окончательными и исчерпывающими, что предполагает возможность разработки новых форматов взаимодействия государства и диаспоры – как всеобъемлющих, так и отраслевых.

SUMMARY

The homeland-diaspora cooperation models can be classified by the nature) and form of the relations.

For the first criteria there are two types of relations: vertical and horizontal. Vertical relations are common for the relatively recent Diasporas, whose countries implement diaspora-centric policies by establishing and managing diaspora structures. Horizontal relations are typical for countries that have traditional diasporas, such as Armenia, Greece, Israel, etc. In this case the country forms equal and mutually beneficial relations with the already existing diaspora structures.

There are two models for the second case, which can be conditionally named "Joint Effort" and "Common Agenda".

The "Joint Effort" model implies implementation of projects where the roles and functions are divided. Worded differently, joint projects help bring government and diaspora structures together under the same roof.

The "Common Agenda" model implies a common idea the implementation of actions of which is left to the discretion of individual structures or persons. That means every institution or in-

dividual decides the steps needed to accomplish the established agenda on their own.

Theoretically, there could be also some interrelationship between the models classified based on the mentioned criteria. The vertical homeland-diaspora relations match to a greater extent to the "Joint Effort" model, whereas the horizontal relations are more compatible with the "Common Agenda". In the Armenian realities, good examples of "Common Agenda" platforms in homeland-diaspora cooperation may include Armenia-Diaspora forums during which on one hand the steps undertaken to implement the ideas voiced in the previous forum should be presented, and on the other hand, a new idea should be postulated to carry out in the period till the next forum.

The science and education sector is one of the most important area that requires work with the specialists in foreign countries. There are a number of challenges for Armenia in this arena, such as insufficient funding of the science, brain-drain, the changing role of science after the collapse of the USSR and lost connections with the former Soviet countries.

Since the Armenia's independence, various diaspora organizations contributed to the cause of preserving and developing the science system of the homeland that was in a grave situation. This included the following:

- establishing new scientific/educational institutions, such as

the American University of Armenia and Vaskenian Theological Academy,

- activities of foundations that regularly furthered scientific research, such as the Robert Boghossian & Sons Foundation,
- renovating R&D institutions' buildings, supplying them with modern equipment, etc.

In the context of the homeland-diaspora cooperation the consolidation of the expert potential of Armenians in foreign countries is important. Both local and diaspora network structures have been established and operate for this purpose, including unions, associations, projects that combine efforts of various specialists, etc. Organizing pan-Armenian conferences with participation of experts in different fields (Armenian studies, political studies, law, medicine, architecture, etc.) is also important, as they serve the purpose of unifying Armenia and diaspora specialists under one roof, exchanging of experience and knowledge, ensuring a stable and regular communication between them.

The activities of network structures consolidating the expert potential of diaspora for Armenia included also components of social (e.g. public health), economic (e.g. energy), environmental and other significance.

In the context of consolidation of the expertise potential of the compatriots residing abroad and promotion of homeland-

diaspora scientific/educational ties, the government of the Republic of Armenia have adopted some important regulatory documents, particularly, the programs for consolidation of the Armenian scientists' potential (2009) and establishment of recording mechanisms and a unified data system for identifying the potential of Armenian Diaspora in the scientific, educational, economic, cultural and other sectors (2010) adopted by government resolutions. These documents outline the strategic goals, roadmap of actions and expected results. Various agencies as well as academic and educational circles were involved in implementation of the programs.

The study concluded that homeland-diaspora relations are based on a *decentralized model*, which corresponds to the above-mentioned horizontal model.

From the perspective of the Diaspora's self-organization, the creation of a pan-national organizational structure remains an urgent matter. To resolve this issue, two models can be used. The first one can be conditionally called *uniform model*, which is largely based on the idea of unifying various structures and layers of diaspora. In this model the unification of Armenians in foreign countries through a single structure is preferable based on the principles of wide representation, trans-partisanship, trans-religiousness, business areas and geographic inclusion and independence from the power centers of the world.

The second one can be conditionally called *confederation model*. It implies localization of the Greek experience and is based on unification of compatriots abroad on the territorial principle. For the Armenian diaspora the self-organization may happen based on the *four-level confederation model*, where the first level will include Armenian communities of individual cities or districts, the second level will involve community federations at the country level, the third level, confederations of the countries' Armenian communities on regional basis, and the fourth level will be represented by Diaspora Armenian or foreign Armenian councils that unify the regional confederations.

The models and cooperation methods mentioned in this study are not claimed to be final or comprehensive. It is suggested that both comprehensive and area-based homeland-diaspora cooperation formats can also be developed.

Նշումների համար

Նշումների համար

Արեստակես Սիմավորյան,
Վահրամ Հովյան

ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼՆԵՐԸ

Գիտական խմբագիր՝
Գագիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Տեխնիկական խմբագիրներ՝
Խոնարհիկ ՔԱՐԱՈՒՂԼԱՆՅԱՆ
Լուսինե ԲԱՂՐԱՄՅԱՆ

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ, 0026 Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ office@noravank.am
Հեռախոս/ֆաքս՝ + (374 10) 44 04 73

Թուղթը՝ օֆսեթ, ծավալը՝ պայմ. 8 տպ.մամուլ։
Տպաքանակը՝ 250։ Տառատեսակը՝ Sylfaen։
Տպագրվել է ՀՀ ՊԵԿ «ՈՒսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ում։